

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ


ԳՐԱԿԱՆ.	Տօբթոր թալմէճի խորհրդածուծիւնն Պարթոյտի	ԵԱՆՔԻՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ.	Աղատութեան արձանին վրայ	Տ. ԱՍԼԱՆԵԱՆ
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ.	Գործաւորաց վիճակն յԵւրոպա	
ԿՐԹԱԿԱՆ.	Աֆղանիստան եւ Սֆղանդիք	ՀԱՍԿԱՔԱՂ
ԱԶԳԱՅԻՆ.	Պարապուրդի Դպրոցական Գաղթականութիւնը ...	
	Հանդէս ընդունելութեան Ամեն Ս. Պատրիարք Հօր	
	ի Վեհ. Սուլթանէն	
ՆՈՐԱՎԷՊ.	Կենն ըստ Աստուծոյ (ՔԱԹՈՒՅՐԻՆ ՏԷՐՊԻ).....	ՎԱՐԱՆԴԱՏԷ
ԲԱՆԱՍՏԵՂՇԱԿԱՆ.	Տարագրեալ դիւղացիի նուէրը իւր գեղջկուհիներին	
ՔԱՂՈՒԱՅ ՇԱԲ. ԼՐՈՑ	Արտաքին, Ներքին, Ազգային	Մ. ԶՈՊԱՆԵԱՆ
ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ.	(Կղալիէ տը Մոնթէքէն) Թարգմ.....	

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻԱ.....	տարեկան.....	Կէս ոսկի Օսման.
»	վեցամսեայ.....	Բառ » »
Գաւառներ	տարեկան.....	Կէս » »
Օտար քաղաքներ.....	»	12 Ֆրանք
Թղթատարութեան ծախք	»	15 դահ. արծաթ
Մէկ թերթին գինն է.....		60 փարայ

Մասիսի խմբագրութեան վերաբերեալ ո՛րեւէ գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ

Խմբագրութիւն Արեւիքի Մարիա Լուսինայ
Ղալաթիա, Երզնկայի մոտ



Կ. ՊՈԼԻԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻ ԼՐԱԳՐՈՒ

Պանք Օթօման.....	530
Գրէտի Լիօնէ	532 50
» Յօնահէ	1342 50
Բամնետումս Լիոնի	1245
Սոռէզի ջրանցք	2037 50
Ռուսական 5 Օ/0 1877ի Բարձրացում	98 1/4
Խաղաղական Ռանթ	95 40
Եգիպտական միացեալ	320
Սպանիական (արտաքին).....	58 3/4
Բրիտիթէ Թիւրք	377 50
5 Օ/0 Հելլենական	344 37 1/2
Զէք Լոնարայի փող	25 25

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

34 ՐԴ ՏԱՐԻ

1885 ՄԱՅԻՍ 11

ԹԻԻ 3769

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 11 ՄԱՅԻՍ

ԳՐԱԿԱՆ

ՏՐ. ԹԱԼՄԵՃԻ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆ
ՊԱՐԹՈԼՏԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԱՐՁԱՆԻՆ ՎՐԱՅ

ՆԻԻ-ԵՌՐԲ, 26 ապրիլ.

Տոբժոր Թալմէճ, որ Նիւ-Եորքի ամենէն պերճախօս քարոզիչը կը համարուի, անցեալ ուրբաթ երեկոյ իւր մէկ ատենաբանութեան մէջ հետեւեալ խորհրդածութիւնն ըրաւ Պարթոլտի ազատութեան արձանին վրայ, որ ինչպէս ծանօթ է Մաֆի ընթերցողաց, Գաղիացւոց կողմէ նուիրուած է Ամերիկացւոց՝ Նիւ-Եորքի նաւահանգստին բերանը դրուելու եւ իւր ձեռքի ջահով զաշխարհ լուսաւորելու համար.

«Որպիսի զուարթարար խորհուրդ, որ այնպիսի ատեն մերք ուրիշ երկիրներու մէջ օգը պատերազմի ծծմբոյ հոտով լեցուած է եւ սուրեր կը սրուին, երբ Անգլիա 50 միլիոն թալէրի ծախք ընելու համար քուէ կուտայ որպէս զի միջազգային կռուոյ մէջ իւր մասը պահէ, երբ Ռուսիոյ բոլոր նաւարանները մարտանաւեր և ծովառումբեր պատրաստելու համար ուռերով եւ մուրճերով կը գոռան ու կը թնդան, մեք հոս առ դրունս ծովու կը կանգնենք պատուանդան մը՝ որոյ վրայ պիտի դրուի Ազատութեան արձանն ունելով ի ձեռին լուսաշող ջահ, որով լուսաւորեալ բոլոր ազգեր պիտի մտնեն մեր նաւահանգիստը:

«Ուրիշ երկիրներու մէջ այսօր կը տեսնուի հրճիգներու ջահ, կոտորածի ջահ, մահուան

ջահ: Ոչ սնապարծ մեծաբանութեամբ այլ խոնարհ շնորհակալութեամբ առ Աստուած ուրախ կ'ըլլանք որ մեր երկիրն ազատ է խառնակութենէ, եւ միանգամայն ի սրտէ ցաւակից կ'ըլլանք օտար ազգաց այս ահաւոր յուզման մէջ յորում կը տաղնապին նոջա: Վաղքան զաւարտ այժմու կռուոյն, որ զհամայն Եւրոպա պիտի առնու իւր անգութ բազկաց մէջ, այս Ազատութեան արձանը կանգնուած պիտի ըլլայ իւր պատուանդանին վրայ ի Պէտլոս կղզւոյ: Ուրախ եմ որ պատուանդանին շինութեան գործն աւարտելու մօտ է: Երկար ատեն կը թըւէր իմն թէ գաղիացի քաղաքացւոց փառաւոր նուէրն, դարուց ամենէն հոյակապ արձանն, արձան մեծագոյն քան զՀռոդեանն, ըստ արժանւոյն պիտի չյարգուէր, եւ անոր յարմար պատուանդան պիտի չը կանգնուէր: Բայց ինչ որ մեր միլիոնատէրը, յաօթ իրենց, չըրին... այժմ կը կատարուի ժողովրդեան միջոցաւ, գործաւոր դասուն մէկ մէկ թալէրի եւ տղայոց տասնական սէնդի նուէրներով: Թող ամենքս ունենանք մաս այս հայրենասիրական ձեռնարկութեան մէջ: Այսպէս մեք զմեզ կը կանգնենք կը կառուցանենք դարուց ի դարս Մեր այս կենաց ճանբորդութիւնը լմնցնելէ շատ ետքն այս Ազատութեան արձանը լոյս պիտի սփռէ ծովուն խորերէն ճանբորդներուն, եւ մերկաց ու փոթորկաց հետ կըռուելով յոգնած նաւորդք պիտի օրհնեն զայն երբ կը մոնեն նեղուցներէն ներս եւ հայրենեաց կարօտ սիրտեր, երբ օտար երկիրներէ հոս կուգան, պիտի զգան թէ լոյսը կը ցոլայ, լոյս բարի դալուստ մաղթելու համայն ազգաց, լոյս հարստահարելոց որ բոլոր կլիմաներէ հոս կը դիմեն, լոյս ճան-

ըորդներու որ ի տար աշխարհէ կը դառնան իրենց հայրենիքը, լոյս ամեն ազգի եւ ամեն կերպ դրօշ կրող նաւերու : Գիշերէ գիշեր այս արձանը սիւտի տայ աշխարհի մեծագոյն նաւահանգստին եւ անոր բազկաց մէջ ամբիօրուած կղզեաց մկրտութիւն հրոյ :

«Մարդ երբէք չկորսնցուներ առաջին տըպաւորութիւնն երկրի մ'ուր կ'եղնէ ցամաք : Նիւ-Եորքի նաւահանգիստն իւր բնական առաւելութիւններով պարտի ամէն տարի աւելի փայլեցունել իւր ժպիտները : Նաւահանգստին շտրջը կան շատ ու շատ ամրոցներ որոց փեղկերէն դուրս կ'երկնան թընդանօթներ : Շատ ու շատ մարտանաւեր կը յածին ծոցին չորս կողմը : Նաւահանգստին մէջ շատ ու շատ են չարածձի սրիկաներ՝ դաղթականաց պայուսակներն եւ գրպանները պարպելու համար : Շատ ու շատ խաբերաներ կը վագեն դիմաւորել գաղթականներն՝ առաջնորդելու համար անոնց ցած եւ անմարդու հիւրանոցներ եւ պանդոկներ : Քէոլ-Կարտըն (Նիւ-Եորքի մէջ այն տեղն ուր առաջին անգամ ցամաք կ'եղնեն եւ իրենց բարեկամներուն կամ ծանօթներուն կ'սպասեն նորեկ դաղթականը) եղած է թատր աւելի ահաւոր ոճիրներու քան զոր երբէք գործած են աշխարհի մեծագոյն չարագործք : Գուք, բարեկամք, ամէն հնարաւոր միջոցներով ջանացէք ընել Ամերիկայի մեծ դուռն աւելի յանկուցիչ, աւելի գրաւիչ : Թող ամրոցները ծածկուին հովանաւոր թուփերով եւ ըլլան գեղեցիկ դարաստաններ, եւ Ամերիկայի ցամաքին ճակտին վրայ դրէք Պարթոլտի այս բոցավառ պսակը :

«Կը շնորհաւորեմ բոլոր արուեստագէտներն երբ կը տեսնեմ գործին մերձենալն ի կատար : Արուեստն, գեղարուեստն, շատ երկար ժամանակ վիշտ կրեց մթութեան մէջ : Հողարաւոր անդրիագործք, նկարիչք, պատկերհանք եւ այլք մինչեւ ցայսօր կ'ուտեն աղքատութեան եւ տնանկութեան հաց, վասն զի անոնց յարգը չճանչնար դուր մը, որ գործնական բան չտեսներ որ ե իցէ իրի մէջ զոր կարելի չէ ուտել կամ խմել եւ կամ հագնի : Սա'այն Աստուած Ազատութեան արձանը ցուցնելով կ'ըսէ գեղարուեստից . «Եկէք ձեր վշտաց թաքստեան վայրէն, եւ աշխարհի նշանաւորագոյն նաւահանգստին մէջ թագ դրէք ձեր գլուխը» :

Այդ արձանին կեցուածքին, այդ ձեռքին շարժուածքին, այդ պատմութեանին ծալքերուն, եւ Նիւ-Եորքի ծոցին մակերեւութին 275 ոտք վեր ամբարձած այդ ջահին շողալուն նայելով գեղարուեստը թող տեսնեն իրենց ազատութեան բարեգուշակ մէկ նշանը : Աշխարհի պատմութեան մէջ այլ եւս չատ ուշ է ժամանակն աղքատ պահելու մեր անդրիագործներն, նկարիչներն եւ պատկերհաններն : Անոնք արժանի են ամէն բանի լաւագուշին : Անոնք մեր տունները զուարթացնելու, մեր քաղաքները զարդարելու եւ զաշխարհ կրթելու համար ըրած են այնչափ շատ բան որ կ'ողջունեմ անոնց վիճակին բարւոյն ամէն նշան : Եթէ գիտէք այսօր Եւրոպայի եւ Ամերիկայի արուեստագիտաց մեծագոյն մասին վիճակը, շատ տխուր եւ ցաւալի բան մը գիտէք : Սկիզբէն մինչեւ վերջն արուեստագիտաց կեանքն է սաստիկ կուլ քաղցի դէմ : Այն օրն երբ Ազատութեան արձանը կը դրուի իւր պատուանդանին վրայ, թող ուրախութեան տօն ըլլայ աշխարհի համայն արուեստարաններու եւ գեղարուեստից թանգարաններու մէջ . թող անդրիագործին գրիչը, նկարչին մատնան եւ պատկերհանին վրձինը մասնակից ըլլան յաղթանակին :

«Պարթոլտի արձանին վրայ կայ բան մը եւս, որ աղէկ դիտուած չէ : Ամէն ոք գիտէ թէ արձանն աջ ձեռքով բռնած է ջահ, բայց իմ վրայ նոյնչափ աղդեցութիւն ըրած է ինչ որ կայ արձանին ձախ ձեռքին մէջ, տախտակն օրինաց : Առանց այդ տախտակին, ո՛հ, աւաղ էր լուսոյ ջահին : Կուղենք որ բոլոր օտարականք որ այսուհետեւ կուգան կը մօտենան Պէտլօս կղզին, այդ արձանին այլաբանական պատկերէն հասկնան թէ այս երկրին մէջ կայ ազատութիւն ըստ օրինաց : Այս երկրին մէջ չկայ տեղի օտար բախտախնդիրներու եւ սրիկաներու . չկայ տեղի անխնայութեան . չկայ տեղի անոնց որ դաւ կը գործեն ընկերութիւն, լոյս եւ օրէնք կործանելու : Ազատութեան արձանն ունի ջահ մէկ ձեռքին մէջ, եւ տախտակ միւս ձեռքին մէջ : Այս երկրին մէջ կայ տեղի ամէն խորհրդոյ, ամէն գործի, ամէն կրօնի, ամէն գոյնի եւ ամէն ազգի . բայց չկայ իրաւունք որ եւ իցէ դատու մը միջամտելու ուրիշ դատերու իրաւանց : Իմ իրաւունքս կը վերջա-

նան հոն ուր կ'սկսին ձեր իրաւունքը : Ձեր իրաւունքը կը դադրին հոն ուր կ'սկսին իմ իրաւունքս : Ազատութիւն կայ իրաւունք եւ արդարութիւն գործելու երկրին մէկ ծայրէն միւսը , բայց զգաստարանի չորս պատերն եւ կախաղան կան անոնց համար որ կը յամառին չար գործելու : Ի՛նչ սքանչելի խորհուրդ եւ գաղափար գաղիացի արուեստագիտին , գաղիացի անդրիագործին խորհուրդն ու գաղափարը : Լոյս եւ օրէնք : Այսպէս Աստուած ի սկզբան անդ ըսաւ . « Եղիցի լոյս » , եւ ջահն որ այն ատեն վառեցաւ երկնից մէջ , մինչեւ ցայժիւ կը վառի եւ կը փայլի : Ապա եկաւ Մովսէս տախտակով , եւ ցորչափ արեւը կը շարունակէ շողալ , Տասն Պատուէրները պիտի շարունակեն կառավարել : Աստուածաշունչն յայտն , իբրեւ արուեստագիտին յղացած եւ պատշաճաբար արձանն , — ազատութեան ջահ ի միում ձեռին եւ օրինաց տախտակ ի միւսումն— : Ուրիշ խօսքով , որչափ աւելի մարդիկ դան Նիւ-Եորքի նաւահանգիստն , այնչափ աւելի աղէկ : Գրեցէք դպարի գրերով բոլոր բլուրներուն վրայ , լուսեղէն գրերով բոլոր ալեաց վրայ , ամպեղէն գրերով երկնից վրայ եւ հրեղէն գրերով գիւշերի թեւերուն վրայ . « Բարի գալուստ » : Բայց հոս այս երկիրը մտնելէն ետքն ամենքն ալ պարտին հնազանդիլ օրինաց : Ամերիկա երբէք պիտի չըլլայ դրախտ օտարական չարագործներու եւ սրիկաներու : Ամերիկա երբէք պիտի չըլլայ ոճրագործներու գաղթականութիւն , կամսիպերիական քսորաւայր : Այդ արձանն երբ իւր տեղը գրուի , հոն պիտի կենայ ըսելու այլ ազգաց . « Լրկեցէք մեզ բոլոր ուղիղ եւ աշխատասէր մարդիկը զորս կ'ուզէք զրկել , եւ անոնք հոս պիտի ունենան ագարակ , տուն , հոս պիտի գտնեն պաշտպանութիւն . բայց ձեզ պահեցէք , կամ առէք ետ տարէք ոճրագործաց եւ սրիկայից ջուլիւները , զի այս տախտակով որ իմ ձախ թեւիս տակ կը կենայ , կ'երդնում թշնամութիւն , բանտարկութիւն եւ դատապարտութիւն բոլոր օրինազանցներու : Մինչ ջահով կը լուսաւորեմ բարիներն , այս տախտակով պիտի ջախջախեմ միւսները » : Թող ներուի ինձ ըսել թէ աշխարհի մէջ գրեթէ չկայ ուրիշ նաւահանգիստ ուր ապահով ըլլայ լուսաւորել այս-

պիսի արձան մը : Ազատութիւն վտանգաւոր բառ մ'է շատ տեղերու մէջ : Գուէտուփը շատ ազգաց մէջ պիտի ըլլար քանդիչ վառօդ պալատներու եւ դահի ներքեւ : Գորգոն մը , որ մէկ ձեռքին մէջ շղթայ եւ միւս ձեռքին մէջ խարաղան կը բռնէ , աւելի յարմար նշանակ պիտի ըլլար շատ նաւահանգիստներու : Շատ մ'իշխանութեանց գինւոյն մէջ աղքատաց քրտանց կաթիլը խառնուած է : Այս եւրոպական պատերազմը որ կ'սպառնայ աշխարհի , կրնայ ըլլալ այնպիսի պատերազմ մը , որոյ միջոցաւ թերեւս միլիոնաւոր հարստահարեալք կարող ըլլան ըսել . « Մարմինս իմս է , հոգիս իմս է , կիսն եւ զաւակներս իմս են , ժամանակըս իմս է . կրուկդ պարանոցէս վերցուր » : Աստուած փութացնէ այն օրն երբ յարմար կ'ըլլայ բարձր պատուանդանի վրայ կանգնիլ աշխարհի ամեն նաւահանգստի մէջ անապաղնձեայ թագուհի , ունելով ջահ ազատութեան ի միում ձեռին եւ տախտակ օրինաց ի միւսումն : Նախնոյն Վենարիոյ մարմարեայ պարիսպներն եւ միակտուր քարերէ բաղկացեալ մեծ թումբերն ծովուն ալեաց առջեւ տեղի տուին եւ կործանեցան . եւ դարուց հոլովմամբ Նէվլըսիքի բարձունքն եւ Պէտլոս կղզին եւ անոր արուեստական փառքը կրնան անհետ ըլլալ , բայց իրաւունքն իրաւունք է , անիրաւութիւնն անիրաւութիւն է , եւ Աստուած Աստուած է յաւիտեանս յաւիտենից » :
ԵԱՆՔԻՆ

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն

ԳՈՐԾԱԴՈՐԱՅ ՎԻՃԱԿՆ ՅԵՒՐՈՊԱ

Տ . ԷՖ . Ալանեան , որ , ինչպէս կը յիշուի , Օսմանեան կառավարութեան կողմէ Գերմանիա զրկուած է երկրագործութիւն սովորելու , Պատերազմէն պէնէն նամակ մը զրկած է իւր մտերիմ բարեկամներն միոյն , յորում հետաքրքրական կերպիւ կը ներկայացնէ գործաւորաց վիճակն : Այդ նամակէն յարմար կը դատենք քաղել հետեւեալ կարեւոր մասը .

Լրագիրները այժմ այսչափ գործաւորաց նիւթական դրութեան վրայ կը դրեն ,

գուցէ հետաքրքիր ըլլաւ գիտնալ թէ ժամանակին հետ անոնց դրութիւնը կը բարեփոխի՞ թէ կը վատթարանայ : Աւստրիոյ Պոհեմիա դաւառին վիճակագրէն կը տեսնենք թէ

	1670ին	1770ին	1870ին
Հողագործ գործաւորի տարեկանն	18մարք	18մ.	30մ.
Հողագործ գործաւորի օրականն	0,10մ.	0,14մ.	0,84մ.
Հողագործ գործաւորուհւոյ տարեկանն	8մ.	10մ.	64մ.
Մէկ քիւժ միսը	0,16մ.	0,24մ.	1մ.
Մէկ հէքթոյիթր ցորենը	3,25մ.	7,30մ.	15,60մ.
Մէկ հէքթոյիթր վարսակը	2,27մ.	4,87մ.	44,60մ.

եղած է . ասկէց կը հետեւի թէ եօթնեւտասներորդ դարու վերջին բաւորդէն մինչեւ ութեւտասներորդ դարու վերջին քառորդը գործաւորաց դասուն դրութիւնը վատթարացած է, մինչ ներկայ դարուս մէջ բարւոքած է առանց տարակուսի : Եռեսնամեայ պատերազմն ամբողջ Եւրոպան աւերակ դարձուցած, եւ ժողովուրդները սնանկացուցած եւ ստրկացուցած էր . այս դրութիւնը տեւեց մինչև Գաղղիական Մեծ Յեղափոխութիւնը՝ որ ժողովրդոց աչքը բացաւ, զանոնք գերութենէ ազատեց եւ անոր ահագին շարժումներէն եւ բաղխումներէն ներկայ հարուստ եւ կրթեալ աշխարհը ծընաւ : Եթէ մարդուս ստեղծմանէն մինչեւ ցայսօր անոր տնտեսական պատմութիւնը կարգաւր, կը տեսնենք թէ ինչ մեծ է 1789ի նշանակութիւնը, թուական յորմէ յետոյ աշխարհս իսկապէս խաւարէն դուրս ելած է եւ հաստատ քայլերով կը յառաջանայ : Արդարեւ Ղուտէրի դալուստն ալ բաւական մեծ նշանակութիւն ունի, սակայն միայն Գերմանիոյ համար :

Ո՛ր երկրին մէջ որ հարստութիւնը քիչ թուով մարդոց ձեռքն է, այն երկրին մէջ թշուառութիւնը ամենէն շատ է . Ֆրանսայի մէջ ամբողջ երկրին $\frac{3}{4}$ ը ժողովրդեան վարի կարգին կը վերաբերի, իսկ Անգլիոյ մէջ հազիւ $\frac{1}{4}$ ը . Գերմանիոյ մէջ միայն 72 ընտանիք մօտ 40,000 քառակուսի քիլոմետր հող ունին մեծամեծ իրաւունքներով, մնացած հողը խիստ անհաւասար բաժանուած է . Աւստրիոյ եւ Ռուսիոյ մէջ ազնուականութիւնն առաւել մեծ դեր ունի քան Գերմանիոյ մէջ : Բայց ասկէց 200 տարի ա-

ռաջ երկիրը բոլորովին ուրիշ տեսակ բաժնուած էր եւ պատերազմը զոր ժողովուրդը կը մղէ դարերէ ի վեր ընդդէմ ազնուականութեան, պիտի վերջանայ առաջնոյն յաղթանակաւ, անոր համար որ Եւրոպիոյ դժգոյցական ներկայ դրութիւնը ոչ միայն կը ներէ, այլ նոյն իսկ կ'ստիպէ զաղքատն հարուստին հետ հաւասարապէս ուսում առնելու, ինչ որ մի թանկագին դրամագլուխ է զայն գործածել գիտցողին ձեռաց մէջ, անոր համար որ աղքատը իւր փոքր դրամագլխով համեմատաբար աւելի կը շահի քան թէ հարուստը, անոր համար որ աղքատը իւր աշխատութիւնը տալով հարուստին դրամագլխին մէկ մասը միշտ կ'առնէ : Ի նրկատի առնելու է նաեւ թէ մեքենաներու բազմանալովը պէտք է որ աւելի բարձր վարձք վճարուի այն աշխատութեանց՝ որք մեքենայով չեն կատարուիր : Գործը շատնալով, պէտքերը կը շատնան եւ պիտոյից շատնալը բարեկեցութեան նշան է : Իմ բնական 2,000 հոգի բնակիչ ունեցող գիւղիս մէջ 100 դաշնամուր կրնաս գտնել, եւ գիւղացիները ֆրանկ պարահանդէսի եւ երեկոյթի կ'երթան . ամենէն աղքատը 500 ոսկի ունի : Համեմատէ՛ թուրքիոյ հետ :

Քանի որ ժողովրդոց թիւը կը շատնայ, պէտք անհրաժեշտ է որ երկրագործութիւնն յառաջ երթայ, որպէս զի մարդիկ անօթի չմնան . բայց հողէն աւելի շատ պտուղ առնուլ համար, պէտք է աւելի մեծ ծախք ընել . մէկ հէքթար լաւ հողը մշակելու եւ ներկայ պարագայից մէջ կարելի եղած բարձրագոյն արդիւնքը քաղելու համար պէտք է 1200 մարք ծախք ընել . ո՛վ շատ հող ունի եւ քիչ դրամագլուխ, պէտք է հողին մէկ մասը ծախէ եւ կամ վարձու տայ, ապա թէ ոչ ի վերջոյ իւր հողերը պարտաւորներէն կը պատանդուին . Գերմանիոյ մէջ մեծ կալուածներուն արդի վիճակը այս դրութեան է հասած : Աւստրիոյ Շվարցշտայնի իշխանի 125,000 հէքթար հողը սեզանաւորաց յանձնախմբի տակ դրուած է, իշխանին հողերը ծախել օրէնքով արգիւրուած ըլլալով : Այսպէս, արդի ժամանակի մէջ իրաքանչիւր որ ստիպուած է իւր ձեռք դնուած դրամագլուխը գործածել եւ զայն ժամանակի պէտքերուն համեմատ գործածել : Քեզ մի օրինակ տամ Գերմանիայէն :

Իմ բնակած ագարակիս խոզապանը, այսինքն խողերը խնամողը, առտուն ժամը 5 էն իրիկուն մինչեւ ժամը ժամը 7 կ'աշխատի. «էփ» է որ ընտանիքը նայի, տղաքը դպրոց դնելու «էփ» է. տղաքներէն մէկը լիսէին շրջանն աւարտեց եւ 1¹/₂ տարի պարապ կեցաւ. լիսէէ մը ելնողը՝ թէպէտ խողարածի տղայ, սակայն տարին 2 ձեռք հագուստ կ'ուզէ եւ առ նուազն 300 մարք հանդերձի ծախք ունի, «էփ» է որ ֆրաֆով պարահանդէսի երթայ ձմեռը. տղան լիսէի մը շրջանն աւարտելէ վերջ կը փափաքի իւր իրաւունքէն օգուտ քաղել եւ միամեայ կամուրք դրուիլ, հայրը պարտէ այս մէկ տարուան մէջ անոր ծախքն ընել, որ առ նուազն 2000 մարքի կը հասնի. եթէ այդ գումարը պատրաստ չունի, տոկոսով կ'առնէ: Միւս տղան լիսէի շրջանն աւարտելէ վերջ Լայքցիկի համալսարանը երթալ կ'ուզէ եւ եւ. այս դէպքերը այնչափ սովորական են որ նոր սերունդի այս ընթացքը մի տեսակ սպառնալիք է եղած գործաւոր դասուն ապագային: Բայց այս միայն առ երեւոյթս սպառնալիք է. խողարածին մեծ տղան 1500 մարք տարեկանով դասատուութեան պաշտօն առաւ եւ իւր խնայողութեամբ հօրն արդէն օգնութեան է եկած. հայրն ինք գրեթէ 200 մարք ամսական ունի, թէպէտ առտուընէ մինչեւ իրիկուն միայն խողերուն աղտեղութեանց հետ պահուած մի պարզ եւ ստորին ծառայ է: Ասկէց տառնեւէինդ տարի վերջը կը տեսնես թէ այս աղտոտ խողապանի ընտանիքն ի՞նչ կ'ըլլայ: Պ տի ըսես որ այսպէս եթէ երթայ աշխարհիս մէջ խողապան չպիտի մնայ. — այսօր այս խողապանը 80 խող կը նայի, վաղն այնպէս բան մը կը հնարեն որ մէկ խողապանը 150 կրնայ նայիլ, միւս օր պէտք եղած խողին կէսն աւելի քիչ լուսաւորեալ երկիրներէ կը գնեն: Այսպէս ահա կուգանք սա եղրակացութեան թէ լուսաւորեալ ազգերն իրենց ուտելիքն աւելի քիչ լուսաւորեալ ազգերէ կը գնեն:

Տ. ԱՍԼԱՆՆԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ԱՅՂԱՆԻՍԱՆ ԵՒ ԱՅՂԱՆՅԻՔ

(ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ)

Արեւելեան Ասիայէն արեւմտեան տանող ճանապարհին, Իրանի բարձր լեռնադաշտին վրայ կը գտնուի Աֆղանական Էմիրի ընդարձակ իշխանութիւնը շրջապատուած մի կողմէ Անգլիական Հնդկական երկիրներով, միւս կողմէ Պարսկաստանով եւ երրորդ կողմէ Ռուսիոյ ասիական երկիրներով: Մինչեւ այժմ Եւրոպացիք չատ քիչ տեղեկութիւն ունեցած են Աֆղանիստանի մասին եւ ուշադրութիւն իսկ դարձուցած չեն. Ռուսիա որ կ'աշխատի ամեն կերպով դրաւել այդ երկիր, ամենէն պակաս տեղեկութիւն ունի նորա վրայ: Եւ այդ մասին տեղեկութիւն ստանալ փափաքողները մասամբ անգլիական լրագրաց եւ մասամբ կեդրոնական Ասիոյ ճանապարհորդներու, որպէս է Վամբերի, Էլֆինսդընի, Էտուարտսի եւ այլոց աշխատութեանց կը դիմեն:

Աֆղանիստան 62⁰ էն մինչեւ 70⁰ արեւելեան երկայնութեան եւ 30⁰ էն մինչեւ 35⁰ հիւսիսային լայնութեան աստիճաններու միջեւ կը գտնուի ունենալով 1,900 վերստ երկայնութիւն եւ 700 վերստ լայնութիւն: Աֆղանիստանի գաւառներն կտրատուած են բազմաթիւ մեծ ու փոքր գետերով, որպէս է Հիլմինտ, Բապուլ, Բաշկար, Հերաթ, Բունտուզ: Այս լաւ ոռոգուած, եւ լեռներով պաշտպանուած երկրին մէջ կը բնակին 5,000,000 Աֆղաններ կամ ինչպէս իրենք զիրենք կը կոչեն Բապաններ եւ ոչ թէ Աֆղաններ. սոքա կազմուած են զանազան ցեղերէ (Տաճիկներ, Սադաքներ, Գըզլուպաշներ եւ), Աֆղանցիք վաղուց հասկցած էին թէ իրենց հայրենիքի մէջէն հոսող գետերէն ոչինչ օգուտ չը պիտի սպասէին եթէ նախնական կերպով պահէին զայն. եւ ահա սկսան դեռերու ընթացքը փոխել, ջրանցքներ բանալ. մի խօսքով երկրին ոռոգումը դրեթէ կատարելադ որոնութեան հասուցին: Այս պատճառաւ զարմանալի չէ որ շատ տեղեր, օրինակի համար «Հնդկաստանի բանալին» Հէրաթիւր պողաւտութեամբ,

ճոխ բուսականութեամբ եւ գեղեցիկ բնութեամբ երկրային դրամատ մ'է որպէս կոչած են եւրոպացի ճոխապարհորդները, սքանչանալով նորա վրայ :

Ոչ միայն ոռոգումով եւ բնութեան գեղեցկութեամբ Հերաթ արժանի է այդ կոչման, այլ եւ կլիմայով : Աֆղանիստանի միւս գաւառներու կլիման ընդհանրապէս միատեսակ չէ, այլ գրեթէ այնքան բազմաւատեսակ է որ նորա իւրաքանչիւր անկեան մէջ բնութիւնը նոր փոփոխութիւն կ'ընդունի : Այն ճանապարհորդներ որք Փապուլի եւ առհասարակ երկրին հիւսիսային կողմն անցուցած են ձմեռը՝ ցուրտի խտուրտութեան դէմ միաձայն կը դանդաղան : Եւ ընդհանրապէս որքան աւելի մօտենան Հնդկաստանի, այնքան աւելի կ'սկսի երեւիլ հնդկական ճոխ կլիման : Սարսափելի տապը մինչեւ 40⁰ աստիճանի կը հասնի չուքին մէջ . աւելի սարսափելի են երաշտն եւ մշտապէս ջերմը : Բնութիւնը կատարելապէս դերձ պահած է զՀերաթ այս ամեն ծայրահեղութիւններէ եւ շնորհած է նմա կլիմայ մը որ ընտրելագոյն է ոչ միայն Աֆղանիստանի այլ եւ ամբողջ Ասիոյ մէջ : Ձմեռը . . . Հերաթցիք միայն լսելով դիտեն թէ ձմեռ կայ աշխարհի վրայ : Ամրան տաքութիւնը 26⁰ աստիճանէն չի բարձրանար . այստեղ անձրեւը անհամեմատ աւելի կանոնաւոր կը տեղանքան Աֆղանիստանի միւս գաւառներու մէջ ուր ձմեռ ատեն կը տիրեն ընդհանրապէս :

Աֆղանիստանի կլիման միացած ոռոգման հետ ոչ միայն բուսականութեան տարածման մեծապէս կը նպաստէ, այլ եւ հարկաւորապէս կ'ապահովէ աֆղան երկրագործի աշխատութիւնը : Խօսելով Աֆղանիստանի բուսականութեան մասին մոռնալու չէ ըսել որ գրեթէ անդհազիւ կը պատահին անտառներ, այն եւս լեռանց գագաթներու վրայ . իսկ խոտի եւ ցորենի բուսականութիւնը խիստ առատ է : Առաջինն իւր ճոխութեամբ այրեցեալ գօտոյ բուսականութիւնը կը յիշեցնէ, իսկ երկրորդն երկրագործին տարւոյն մէջ երկու հունձ կուտայ գարնան վերջն եւ աշնան սկիզբն : Երկրին մէջ գլխաւոր դարմունքն երկրագործութիւնն է եւ ամենէն աւելի ցորենի մշակութեամբ կ'զբաղին . երկրորդ տեղը բրինձը կը բռնէ : Բաց աստի անդ կը

մշակեն շաքարեղեգն, խաղող, սեխ, ձմերուկ եւ մինչեւ անգամ բամբակ :

Աֆղանեան հողին հարստութեան նկարագիրը տակաւին շատ թերի պիտի համարուէր եթէ չը յիշենք նորա հանքային հարստութիւնն ալ որ թէ եւ խիստ առատ սակայն աւելի անմշակ է քան Ռուսիոյ հանքային հարստութիւնը : Այսպէս օրինակի համար Նախմարտիոյ եւ միւս տեղերու գետային աւազներէն կ'ստացուի ոսկի բայց շատ քիչ : Արծաթ կ'ստացուի Հինտուգուշի լեռներէն . երկաթ ամենէն աւելի կը ստացուի Պէրմուլի եւ Պաճուրի մէջ . կան նոյնպէս արծիւ, ծծումբ, հանքածուխ, արոր եւ այլ հանքեր որք առանց շահագործութեան եւ նախնական վիճակի մէջ կը մնան :

Այսպէս ահա, Աֆղանցիք թէ եւ վաղուց արդէն դնահատած են երկրագործութեան օգտակարութիւնն եւ հող տարած նորա դարգացման, բայց մինչեւ այժմ հանքագործութեան օգտակարութիւնը հասկըցած չեն :

Աֆղանցիք երեք մասի կը բաժնեն իրենց հայրենիք, բոլորովին անհամապատասխան եւրոպացի աշխարհագէտներու բաժանմանց.

1) Փապուլի հովիտն որ աւելի կը վայելէ բնութեան պարզեւները . 2) Խորոսան, որ կը ներկայացնէ լեռնային հարթութիւն մը բաժնուած աղքատ բուսականութեամբ ծածկուած լեռներով, և վերջապէս 3) Աֆղանական Թուրքիստան՝ Գուլ, Գունտուզ, Պալք, Ակխա, Սարիբուլ, Շիւրահան, Անդխայ եւ Մայման գաւառներով հանդերձ . այդ տեղէն կ'անցնի Քոխ-ի-Պապա շղթան, Ամու-Տարիոյ հարաւային հովիտն, Գունտուզ, Պալք եւ ի վերջոյ Մուրղապ, որոյ մէկ ճիւղն կը կազմէ Գուլք գետակը :

Բոլոր այս գաւառները Էմիրի իշխանութեան ենթարկեալ են միայն . սակայն սրբալ կը լինէր եւրոպական տեսակէտէ նայել Էմիրի այս իշխանութեան վրայ, որ տեսակ մը խառն ու փնդոր միապետութիւն ու հասարակապետութիւն կը ներկայացնէ : Թէ եւ Էմիրն միապետ կը համարուի, բայց իւր միապետական իշխանութիւնն եւ ազդեցութիւնը պարտաւորուած է պահպանել զէնքով եւ բազմաթիւ զօրքերով, որոց համար 5 միլիոն ռուբլի կը ծախսէ ամեն տարի :

Այս զօրաց միջոցաւ իւր հպատակներէն կը ժողովէ տօրիններով բարդուած հարկերը զորս Աֆղանցիք կը վճարեն դժկամակութեամբ: Էմիրի հպատակը զանազանք ընտրութեանց ժամանակ բողբոջովին անկախ են. իրենց մէջէն կ'ընտրեն ամբողջ գիւղին ներկայացուցիչն — գիւղական տանուտէրը (Վէլէ): Իւրաքանչիւր գաւառակ ունի իւր անձին պետը — Սարգս: Թէ եւ այս ամեն անձինք իշխանութեան այլ եւ այլ աստիճաններ ունեցող պաշտօնեայնք են, սակայն չեն վայելեր այն յարգ ու համակրանք զոր կարելի է յուսալ: Այս պարագայ Աֆղանցոց ծայրայեղ ազատասիրութեամբ, անկախութեամբ, օրինաց եւ պարտականութեանց մասին ունեցած հասկացողութեամբ կը բացատրուի: Այսպէս, օրինակի համար, կատարելապէս հասկնալով որ Էմիրի պահանջած հարկն օրինական է, սակայն միշտ խոյս կուտան այս հարկը վճարելէ:

Այս պատճառաւ տեղի կ'ունենան ծանր դէպքեր: Քանի մը տարիներ շարունակ հարկեր չը վճարելուն պատճառաւ, Էմիրի գանձարանը բաց կ'ունենայ, այն ատեն կը ժողովէ զօրքերը եւ կ'ուղարկէ չը վճարուած հարկերն հաւաքելու. եւ այսպիսի դէպքեր դրեթէ միշտ կը կրկնուին: Աֆղանցին որքան ազատօրէն կը վերաբերի դէպի իւր վրայ դրուած պետական պարտաւորութիւններն, նոյնքան ազատօրէն կը վերաբերի եւ դէպի բարոյական սկզբունքը. ասկէ այն կը հետեւի որ հիւրասիրութեան օրէնքը պարտք կը դնէ Աֆղանցիի վրայ ուրախութեամբ ընդունիլ օտարականն եւ ամեն տեսակ օգնութիւն մատուցանել անոր, թէն այդ անձ իւր կենաց կամ ընչից թշնամին իսկ լինի. այդ հիւր — թշնամին քանի որ Աֆղանցիի տան մէջ է, կը խնամուի ու կը մեծարուի անկէ. իսկ տունէն ելնելէն յետոյ ճանապարհին կը կողոպտուի:

Պոռնկութիւնն յանցանք կը նկատուի Աֆղանցոց մէջ, սակայն Աֆղանիստանի բնակչաց 5% գաղղիական ախտիւ վարակեալ է. այս որքան ալ որ սարսափելի նկատուի, այնու ամենայնիւ իրողութիւնն մ'է:

Հակառակ այս ամեն բարոյական ապականութեանց, Աֆղանցին ունի մարմնոյ առողջ կազմութիւն: Իւր գծադրութեամբ քիչ մը սեմական ցեղին կը նմանի. գեղե-

ցիկ, խարտեալ եւ սպիտակաշէմ է: Կանայք եւս գեղեցիկ են. խօսելով այս վերջնոց մասին, կարելի չէ ուշադրութիւն չը դարձնել ընտանեկան ձգտեալ վիճակի վրայ: Այլն ամեն փափաքածը կարող է կատարել, իսկ կինը պարտաւոր է օրէնքէն չը շեղիլ. ասոր համար կինն կ'սկսի խաբել իւր ամուսինն, բան մ'որ ամենօրեայ սովորութիւն դարձած է:

Աֆղանցիք կրօնքով Սիւննիներ են եւ կը ճանչուն իբրեւ յոյժ նախապաշարեալ ժողովուրդ. լեզուի կողմէ թէ եւ Հնդկ — սանսկրիտ ընտանիքին կը պատկանին, բայց խիստ այլանդակ աղաւաղեալ լեզու մ'ունին: Անասնապահ — թափառաչիլ Աֆղանցոց լեզուն պարսիկ լեզուին կը նմանի: Մարդաստաները կ'ըսեն թէ Աֆղանցիք այնպիսի ժողովուրդ մ'են որ աստիճանաբար դէպի բարոց ապականութիւն կը դիմէ, որ նոցա մէջ հետզհետէ մահաւանց թիւը կ'աւելցունէ:

Կ Ր Թ Ա Կ Ա Ն

Պ Ա Ր Ա Պ Ո Ւ Ր Դ Ի

ԴՊՐՈՅԱԿԱՆ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

Յայտնի է թէ եւրոպական ազգերն ո՛րքան ընդարձակ եւ լուրջ կերպիւ ըմբռնած են այն դործն զոր մեք Երեւանի կը կոչենք: Այդ մասին չէ որ մեք պիտի խօսինք մեր ընթերցողաց: Այլ կ'ուզենք մի փոքր գաղափար տալ սա իրողութեան վրայ թէ այն տեսակէտն, որով Եւրոպացիք կ'ըմբռնեն Երեւանը, շատ ու շատ կը տարբերի մերինէն: Արդարեւ, Եւրոպացոց մէջ, տղուն բարոյական զարգացման հետ, Փիղիքական զարգացումն ալ նկատողութեան կ'առնուի, բան մ'որ, ցաւալի է ըսել, յոյժ անտես առնուած է մեր ազգային նախալրթական վարժարանաց մէջ: Հարկ չենք տեսներ երկար ապացուցութեանց դիմել մեր ըսածն հաստատելու համար. միայն նոյն մը տալու համար այն միջոցներու, որոց կը դիմեն Եւրոպացիք, տղայոց, մանաւանդ մանկանց

աւանդելու համար առողջապահական կըրթութիւն մը, քաղելով յառաջ կը բերենք թան լրագրոյ մեծանուն քրոնիկադիր Պ. Ժիւլ Քլարսի մէկ յօդուածն, յորում կը խօսի թատերդակ բանաստեղծի մը, Պ. Էտմոն Քոթինէի մէկ կըրթական գործին վրայ: Պ. Քոթինէ, Փարիզու ՅԲԴ շրջանակին դպրոցաց Սնտուկին տնօրէնը լինելով, ստեղծած է Պարսպարէ Դպրոցական Գաղութականութիւններ, այսինքն փոքր ուղեւորութիւններ, հետիոտն եւ կառքով, որք թոյլ կուտան չքաւոր մանկանց, իրենց տարեկան սլարապուրդի ժամանակ, հեռանալ Փարիզու ասպականի մըթնոլորտէն՝ վաղվելու համար դաշտերուն մէջ եւ ծծելու անտառաց բոյրն կամ ծովուն սղոխը:

Այդ Արձակուրդի Դպրոցական Գաղթականութիւնը առողջապահական հաստատութիւն մ'են, հիմնեալ յօդուտ նախնական վարժարանաց հիւանդոտ տղայոց, «հիւանդոտներուն մէջ սղքատագոյններուն» կ'ըսէ Պ. Քոթինէ, եւ աղքատագոյնից մէջ արժանաւորագոյններուն: Այդ տղայք, մանչ եւ աղջիկ, իրենց սովորական վարժապետաց եւ վարժուհեաց հսկողութեան ներքեւ փոքր խումբերու բաժնուած, ամիս մը կ'անցունեն գիւղերու մէջ, Ֆրանսայի արեւելեան բարձանց վրայ: Այդ վերադառնան լաւ մնած, մաքուր օդէն եւ մարզանքէ զօրացած, զարգացած, գեղջկական կենաց տեսարանէն օգտուած: Տկարակազմ տղուն հասակը կը զարգանայ, իւր վախտ անդամները կը զօրանան, իւր կուրծքն — Փարիզու տղուն այդ նիկար կուրծքը — կը զօրանայ, եւ երախտագիտութիւն սովորեցնելով այն խեղճ տղայոց զորս այսպէս կը զրկեն յուղեւորութիւն, Պ. Քոթինէ եղբայրական բարեգործութիւն ուսուցած է հարուստ տղայոց:

Արդարեւ, յանուն իւր խոնարհ գաղթականաց, Պ. Քոթինէ զարկած է Գորտորսէ լիկէոնին եւ Քոէն ու Սէվինէ գոլէժներու դռներն, եւ խնդրած է ամենէն երջանիկներէն իրենց աջակցութիւնը տալ թշուառագոյնից: Պ. Ժիրար, վերակացու Քոնտորսէ լիկէոնին, դասարանաց մէջ ցրուել տուած է Պ. Էտմոն Քոթինէի սլարդ ու սրտաշարժ տեղեկագիրն, եւ Քոնտորսէի աշակերտներն 1200 Ֆրանք զրկած են Պա-

րապուրդի Դպրոցական Գաղթականութեանց: Աւատիկ եղբայրասիրութիւնն:

Այդ բնագոյն — որ երբեմն շատ կանուխէն կը զարթնու մանկան մէջ, — այդ բնագոյն զոր պէտք է ուղեւել իբր հագուելու տունկ մը, Պ. Էտմոն Քոթինէ բարձրացուցած է զայն. եւ իւր խեղճ տղաքներն հարուստ տղաքներէն ընդունած են նուէրներ, որք թոյլ տուած են հարիւր գաղթականի, աշակերտ եւ վարժապետ, մանչ եւ աղջիկ, երթալ իբր ութն ամիս առաջ՝ չորս շաբաթ անցունել Վոթի բարձանց վրայ:

Արեւելեան երկաթուղեաց ընկերութիւնը սակաւնոց գեղջ մը շնորհած է: Մեծ վարչութիւնը, միանգամայն եւ մասնաւորք, թատերդակ հեղինակք, երաժիշտք եւ նուարիչք տուած են իրենց լումայն, եւ, փառաւորապէս — իբր յաղթանակ մը տարուած ընդդէմ վատառողջութեան եւ թշուառութեան — Պ. Քոթինէ իւր տեղեկագիրն մէջ կը ծանուցանէ թէ 1884ին ի Շոմոն, ի Սէն-Տիէ, ի Լիւքսեմբուրգ զրկուած իւր տասն եւ մէկէն տասներեք տարեկան փոքրիկ գաղթականները շահած են՝

Միջին աճում	Ծանրութեան	2 քիլ. 833 կրամ
»	Հասակին	18 հազարերորդկմ:
»	Կուրծքին	33 »

Փոքրիկ աղջկունք աւելի օգտուած են առողջութեան և ուժի այդ աճումէն: Աւելի նորատի էին, աւելի մարմնամարդ ըրած են: Մնաց որ, Վոթ զրկուած այդ հարիւր տղայոց մէջ՝ որոց կ'ընկերանային քանի մը բժիշկ, ոչ ոք հիւանդացած է: Եւ ճանբուն վրայ ամեն ինչ բացուել է իրենց առջեւ, թանգարանք, գործարանք, մասնաւոր հաւաքածոյք, հեռադրական հաստատութիւնք, և մանաւանդ աղքատաց տուններն: Այո՛, այդ խեղճ փոքրիկ էակաց ճանբուն վրայ, ամենուրեք անձնութիւն և գթութիւն: Գործաւորք իրենց աշխատութիւնը իր թողութիւն՝ գաղթականութիւնն առաջ որդեկու համար: Պանդոկապետուհիք, բարեսիրտ գեղջկուհիներ, իրենցմէ դնուած հացին վրայ կ'աւելցնէին կարագ կամ կաթ՝ զոր չէին ուղեր ծախել, և համբոյր մը զոր կ'ուզէին տալ անպատճառ:

Սակայն ինչ որ ամենէն հետաքրքրա-

շարժն է Դպրոցական Գաղթականութեանց յանձնախմբի տեղեկագրին մէջ, այն մասն է յորում Պ. Քոթինէ կը յիշատակէ իւր պաշտպանելոց Յառաջխաղացութեան Օրաբնութիւնը: Այդ տղաքներուն գրեւ տուած են իրենց ամենօրեայ տպաւորութիւնքն: Եւ ի՞նչ հանձարեղ գաղափար: Հիանալի են այդ խոստովանութիւնները: Այդ փոքրիկ ջրղիկներուն ոճը երբեմն գարնանային թարմութիւն ունի: Այդ խեղճ փոքրիկ անարիւն Փարիզէիներն արձակեալ բանտարկելոց ուրախութիւններ կ'ըզան ի տես ծաղկանց և դալարեաց: Մնաց որ չես գտներ այդ խոստովանութեանց մէջ կեղծ բանաստեղծութիւն, հիւանդոտ զգայնութիւն: Եթէ երբեմն կուլան, այն ատեն է այդ երբ կը հանդիպին, դերեզմանի մը մէջ, հայրենեաց համար մեռած զինուորներու ի սպառիւ կանգնեալ յիշատակարանի մը: Բայց ծաղիկներն, հաւամրդիներն են որք կը յանկուցանեն զայնս, եւ բանջարանոցներն, կաղամբներն կամ հաւատուններն են որք հաճելի են նոցա: Պէտք է կարգաւ անոնց պատասխանելն, որք գորովալի են: Այդ գաղթականներն ու գաղթականուհիք լաւ նկարիչներ են բնութեան: Բնութեան ընդոծին զգացումն ունին, լերան, անհունութեան կրօնական երկիւղած յարգանքը: Այդ փոքրիկ աղիլիկներէն մին, Ժայռի մը վրայ մագլցած, կը դռչէ ի տես Մոզէլի որ կը տարածուի հեռուն, երկնից կապոյտին ներքեւ. «Այս բաները կարծել կուտային թէ դրախտին մէջ են»:

Արդէն Պ. Քոթինէ կը յիշատակէ այդ աղիկանց խոստովանութիւններէն քանի մը էջեր.

«Թագուհիներու պէս քնացանք, կ'ըսէ անոցմէ մին. աղնուհամ ճաշ մ'ըրինք: Օղբ տաք է: Արեգակն իւր ճառագայթները կ'արձակէ պարտէզին վրայ: Առաւօտը անցուցինք մեր գործերը կարգի դնելով, մեր սենեկին հոգերով զբաղելով: Պատրաստեցինք մեր անկողիններն, աւելցինք, սրբեցինք: Երբ աւարտեցինք, գնացինք շտեմարանին մէջ թափալտիլ յարդին լրայ, յետոյ պարտէզ իջանք: Գիրք մը տարինք հետերնիս, և հոյնի մը տակ կարդացինք...» (Ժ. Լորան, աշակերտուհի Քլոզէլ փոքրէն, 12 տարեկան):

Այդ քանի մը տողերն, իրենց պարզութեան մէջ, ունին շնորհն իսկ մանկան որ կը խաղայ խնդալով: Այդ չնչին խոստովանութիւնները կը նմանին այն պարզ նկարներուն զորս տղաք կը գծեն իրենց պարտականութեանց տետրակներուն վրայ և որք, իրենց զուարճալի անհմտութեան մէջ, երբեմն խորհիլ կուտան արուեստագէտ ուսուցիչ մը:

Եւ միայն գիւղը չէ որ կը նկարագրեն այդ աղիկունք, հապա նաեւ գիւղացին որուն կը հանդիպին և որ կը զարմացնէ զիրենք:

Ուրիշ մը գրէ.

15 Սեպտեմբեր. — Կէս օրէն յետոյ, Բուպա և Շաթէլի անտառը պիտի երթանք, ուր պիտի կարդանք, պիտի խաղանք և պիտի հանգչինք: Անտառ կը հասնինք, և չենք խաղար, չենք կարդար և չենք հանգչիր, այլ կը վազենք, կտրած ծառերու վրայ կ'որուլինք, ծաղիկփունջեր կը կաղմենք: Գիւղին մէջէն անցնելով վերստին, կաթ կը լամենք զուարճալի կնոջ մը տունը, որ, նախ եւ առաջ, կը կարծէ թէ Տիկինը մեր ամենու մայրն է, յետոյ բազմաթիւ հարցումներ կ'ուղէ մեզ զիտնալու համար թէ ուստից կուգանք, ո'վ ենք, ինչո՞ւ համար անդ կը գտնուիք: Գրեթէ բոլոր գիւղացիք այդպէս են: Բազմաթիւ բացատրութիւններ կը խնդրեն և կը վերջացնեն ըսելով. «Ա՛հ, Փարիզէն էք: Ես քոյր մ'ունիմ ֓ Փարիզի մէջ»: Ուրիշ անգամ, մօրաքոյր մը կամ հօրեղբորդուստր մ'է: Սպասուհի է երկաթուղոյն մօտ նպարավաճառի մը քով: Թերեւս կը ձանչէք զայն: Անունն է...: Եւ անո՞ւնն ալ կ'ըսեն: Ա՛հ, ի՞նչ զուարճալի են:»

Արդ «ուղեւորութեան տպաւորութիւնները» գրողը կապրիէլ Լաչօ անուն աղջիկ մ'է տաճուկէս տարեկան: Ի՞նչ պարզմտութիւն այդ տողերու մէջ:

Պարզմտութիւնը սակայն այդ փոքրիկ աշակերտուհեաց գլխաւոր յատկութիւնը չէ: Մարդ շատ անգամ կ'զգայ թէ կատարեալ կին մը ծածկուած է այդ մանկական ըզգեստներուն ներքեւ: Անոնցմէ մին, զոր քիչ մը երկար ատեն կը պաշտօնեն Վոփ անտառներուն մէջ, երբ կը գրէ իւր յուշատետրին էջերուն վրայ «Լերանց օդն եւ

եղեւիններու հոտը կողիկի տեղը չեն բռններ», հաճոյական ազդեցութիւն մը կ'ուենայ վրադ, եւ սիրելի է որ տասներկու տարեկան ստամոքս մը դանդաղ ժամանակին կշտացած չլինելուն համար: Բայց, ինչ որ նուազ մանկական է, ուրիշ աղջկան մը սա դիտողութիւնն է որ բաւական տարօրինակ կերպիւ կը բողբէ Սէն-Տիէի բնակչաց կովու մօին եւ դետնախնձորին դէմ:

«Ա՛լ կերած կովու միտ կ'օգտէ մնացեալ օրերուս համար: Կ'երեւայ թէ Սէն-Տիէի բնակիչք ամեն օր արգանակ կ'ուտեն: Լաւ ուրեմն, կը մեծնամ եւ կը ծերանամ, ու երբէք չեմ ամուսնանար Սէն-Տիէցի մարդու մը հետ: Շատ կը վախնամ թէ դժբաղդ սէր մը պահէ ամենօրեայ արգանակին համար»: Ա՛հ, այս անգամ այդ տողերն ուր ապագայ ամուսինը կը խառնուի ներկայ արգանակին հետ, բոլորովին տարբեր գաղափար մը կուտան փոքրիկ աղջկան մասին: Մանչ աղայ մը ուրիշ կերպ պիտի բացատրէր իւր միտքը եւ արգանակը պիտի անիծէր՝ առանց ամուսնութեան գաղափարներ խառնելու:

Ինչ որ ալ լինի — եւ դառնալու համար Դայրացական Գաղութանոսութեանց դործնական առաւելութեան — աղջիկներն այս ուղեւորութենէ դարձին չահած են միջին հաշուով 2,035 կրամ ծանրութիւն եւ 17 հազարերորդամբ կուրծքի լայնութիւն: Հասակն աճած էր 11 կամ 12 հազարերորդամբ, եւ այն փոքրիկ աղջիկն որ ամենէն աւելի բողբած էր Սէն-Տիէի բնակչաց ամենօրեայ ուտեստին դէմ, վերադարձին չորս քիլոկրամ աւելի կը կշռէր: Կովու միտն ալ օգտակար է, օրիորդ:

ՀԱՍԿԱՔԱՂ

ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՆԴԵՍ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ

ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐԺ ԶՕՐ

Ի ՎԵՀ. ՍՈՒԼՈՒՆԷՆ

Ամեն. Տ. Յարութիւն Ս. Պատրիարք Հայրն այս երկուշաբթի օր պատիւ ունեցաւ Վեհ. Սուլթանին ներկայանալու եւ

ապա իւր առաջին պաշտօնական այցելութիւնները տուաւ նախարարաց:

Առաւօտուն, կայսերական պալատէն դրկուած հանդիսական կառօք, Ս. Պատրիարքն իւր հետ ունենալով Թէշրիֆաթի պէյն, Գեր. Նար-Պէյ եւ Իզմիրեան Սըրբազանները, Պատրիարքարանի գործակատար Ս. Ֆրէնկեան էֆէնտին, Տ. Եուսուֆեան, Բ. Հալաճեան էֆէնտիներն եւ հեծեալ վեց վարդապետներ, մեծ հանդիսիւ Եւլաղի պալատը գնաց ուր կը գլուխուէր արդէն Քալաքական ժողովոյ ատենապետ Վսեմ. Սիմօն պէյ: Արարողապետ Մինիր փաշա արժանավայել պատուով ընդունեց զՍ. Պատրիարքն եւ ուղեկիցներն որոց հետ իբր քառօրդ ժամ մը տեսակցելէ յետոյ, արքունական դահլիճն հրաւիրեց զՍ. Պատրիարքն, Գեր. Նար-Պէյ եւ Իզմիրեան Սըրբազաններն, Վսեմ. Սիմօն պէյն եւ գործակատար Աբրահամ էֆէնտին, որը պատիւ ունեցան Վեհ. Սուլթանին ներկայանալու: Ն. Կ. Վեհափառութիւնը կը կըրէր զինուորական համազգեստ եւ իմթիազի ու Օսմանիյէի ականաւորու պատուանդաններ զարդարած էին իւր կուրծք: Ս. Պատրիարքն իւր յարգանքն ու ողջոյնը մատուցանելով Սուլթան Համիտ Կայսեր, Թուրքերէն լեզուաւ ուղերձ մ'արտասանեց որոյ աւասիկ թարգմանութիւնն.

Օգոստափառ Կայսրդ իմ.

Անկարող եմ ըստ արժանւոյն արտայայտել խորին երախտագիտութեան ու շնորհակալեաց զգացումներս Ձեր Կայսերական Վեհափառութեան թանկագին շնորհաց համար, որով բարեհաճեցաւ իւր բարձր Իրատէով անուանել զիս ի Պատրիարքութիւն Հայոց Կ. Պոլսոյ, եւ արտօնութիւն տալ խոնարհ ծառայիս՝ իւր առջեւ ներկայանալու փառքն ու պատիւը վայելելու:

Հայ ազգն, իբրեւ երկնատուր աւանդ յանձնեալ ի ձեռք Ձեր արդարադատ Վեհափառութեան, իւր բարեկեցութեան միջոցները կը գտնէ միայն Ձեր Կայսերական Վեհափառութեան հովանւոյն ներքեւ: Հայ ազգը գիտէ նաեւ թէ ներկայիս օրպէս ապագային մէջ ապաստան պիտի կրնայ գլուխել միայն Ձեր Կայսերական Վեհափառութեան Գահոյից շուքին ներքեւ: Ուստի,

հաւատարմութեան և հնազանդութեան խորին զգացմամբք տողորեալ, պարտականութիւն կը համարին այսօր ևս մատուցանել Բարձրեւոյն Աստուծոյ՝ իրենց հանապազօրեայ աղօթքները վասն երկարակեցութեան և բարօրութեան առատագութ՝ վեհապետիդ : Թարգման և միջնորդ լինել արտայայտութեան այս զգացմանց՝ մեծագոյն բարեբախտութիւնն է Օգոստոսիոս ինքնակալիդ խոնարհ ծառային համար :

Բարձրեալն Աստուած՝ մեր բարերար վեհապետին երկար օրեր պարգեւէ, և անսասան պահէ զՆա իւր փառաց Փահուն վրայ ։

Ն. Կ. վեհափառութիւնն հաճոյանօրունին դրաւ եւ հետեւեալ կերպիւ պատասխանեց .

« Տուանդդտան մէմնուն օլտում. սէլէֆինիլ Ներսէս էֆէնտինին վէֆաթըն. տան միւթէէսսիր իտիւմ. սիզին կիպի տիրայէթլի վէ էհլիթլի պիր զաթըն ինթիխապը մէմնունիյէթիմի մուճիպ օլտու . ումում թէպամ ինտիմտէ միւսափի տիր . էրմէնի միլլէթինին Տէվլէթիմէ օլան սատաղաթը միւսէլլէմ տիր . ինչալլահ Ձաթընը չօգ զէման Տէվլէթիմէ վէ միլլէթինիզէ հիւսնի խըմտէթ իթմէկէ մուվաֆֆադ օլուր. սընը » :

(Թարգմանութիւն)

« Գոհ եղայ ձեր աղօթքէն : Յաւ կ'ըզդայի ձեր նախորդին՝ Ներսէս Սրբազանի մահուան համար : Գոհ եղայ Ձեզ պէս արժանաւոր եւ խոհեմազարդ անձի մ'ընտրութենէն : Բոլոր հպատակներս հաւատար են իմ առջև : Հայ ազգին հաւատարմութիւնն առ իմ Տէրութիւնս՝ հանրածանօթ է : Կը մաղթեմ որ Դուք կարողանաք երկար ժամանակ բարեռք ծառայել իմ Տէրութեանս եւ Ձեր Ազգին » :

Ապա Ն. Սրբազնութիւնն հետեւեալ բարեմաղթութիւնն ըրաւ ի նշան երախտագիտութեան .

« Յաւիտենականն Աստուած իւր վեհա-

շուք Փահոյից վրայ կատարեալ առողջութեամբ, բարեկեցութեամբ ու յաջողութեամբ անվթար պահէ պահպանէ մեր ամենողորմած վեհափառ Տէրն և Կայսրը ։

Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ նաեւ իւր բարձր գոհունակութիւնն յայտնել Ս. Պատրիարք Հօր ուղեկցող ազգային եկեղեցական եւ աշխարհական պաշտօնատարները տեսնելուն համար . ապա յատկապէս կոչելով Վսեմ. Սիմոն՝ սէյն, « ազգային գործոց մասին տուած աշխատութիւնները լսած եւ գոհ եղած լինիլն » յայտնեց :

Յետ այսորիկ, Ս. Պատրիարքն եւ իւր ուղեկիցք ընդունելութեան սրահը վերադարձան ուր քիչ վերջը Միւնիքի փաշա Առաջին կարգի Մէճիտիյէ պատուանշանը բերաւ ընծայեց Ս. Պատրիարքին : Ն. Ամենապատուութիւնը պատուանշանը կուրծքը կախեց եւ շնորհակալութիւն յայտնելով, կրկին բարեմաղթութիւններ ըրաւ Օգոստոսիոս Կայսեր կենաց համար : Միւնիքի փաշա յայտնեց թէ Ն. Կ. վեհափառութիւնը կը փափաքի մասնաւոր տեսակցութիւն ալ ունենալ Ս. Պատրիարք հօր հետ :

Ապա հրաժեշտ առին եւ մեկնեցան նոյն հանդիսիւ . Սիրքէճիի առջեւ կ'սպասէին պալատական ուրիշ հինգ կառքեր յորս կը գտնուէին երկու եպիսկոպոսունք, Կրօնական և Քաղաքական ժողովոց անդամ, վարդապետք եւ աշխարհականք . Ս. Պատրիարք Հայրն՝ Սիրքէճի հասնելով, երկու խումբերն միացան եւ թափօրն ուղղուեցաւ ի Բ. Դուռն : Բաղմաթիւ ձիաւոր վարդապետք, քահանայք եւ Պատրիարքարանի պաշտօնեայք չըջապատած էին կառքերն որոց առջեւէն կ'ընթանային հեծեալ բարապանք եւ զօրականք : Ճանքուն երկու կողմը խուռն բազմութիւն լցուած էր եւ Ս. Պատրիարքն յաջ եւ յահեակ կ'ողջունէր զժողովուրդն : Այսպէսով հասան ի Բ. Դուռն : Եպարքոսական մեծ դրան առջեւէն սկսեալ մինչեւ ներս, երկու կարգի վրայ բարեւի կեցած էին խավազք եւ զօրականք որոց մէջէն անցնելով Ս. Պատրիարքն եւ ուղեկիցք, առաջնորդուեցան մեծ դահլիճն : Ս. Պատրիարքն՝ չորս եպիսկոպոսներով, երկու վարդապետք եւ աշխարհականներէն Տ. Եղսուֆեան, Բ. Հալաճեան եւ Ֆրէնկեան Աբրահամ էֆէն-

տիններու հետ ներկայացաւ Բարձր. Սայիտ փաշային որ սիրալիր ընդունեց թիւն ըրաւ :

Անդ, Ն. Սրբազնութիւնը շնորհակալ լինելով նախ Վեհ. Սուլթանին կողմէ գտած համակիր ընդունելութեանն համար, յայտնեց թէ Հայ Ազգին առ Օսմանեան վեհապետս ունեցած դարաւոր հաւատարմութեան շարունակութեան աւանդապահ պիտի լինի ինք եւս, եւ ըսաւ թէ ազգային գործոց բարւոյք ընթացքին համար Նորին Կ. Վեհափառութեան շնորհաց եւ վստահութեանը եւ Բարձր. Նախարարաց պաշտպանութեան կարօտ է : Սայիտ փաշա պատասխանեց թէ ինչպէս որ Նորին Կ. Վեհափառութեան շնորհներն անպակաս պիտի լինին միշտ Հայ ազգին վրայէն, նոյնպէս եւ Ս. Պատրիարք Հօր առ Տէրութիւնն եւ Ազգն մատուցած ծառայութիւններն յայտնի լինելով, Տ. Յարութիւն Պատրիարքի ընտրութիւնը մեծ գոհութիւն պատճառած է Բ. Դրան կառավարութեան : Բարձր. Եպարքոսն յարեց թէ ինք եւս հարկ եղած աջակցութիւնն եւ պաշտպանութիւնը չպիտի երբէք զլանայ :

Ս. Պատրիարքն հրաժեշտ առնելով Մեծ-Եպարքոսէն, իւր ուղեկցաց հետ այցելութիւն տուաւ Ներքին գործոց նախարար Բարձր. Էտհէմ փաշային, Պետական խորհրդոյ նախագահ Վսեմ. Ա. քիթ փաշային, Արտաքին գործոց նախարար Վսեմ. Ասիմ փաշային, եւ անտի Դատական եւ Կրօնական գործոց նախարարի տեղապահ Քեամիլ փաշային որոց ամենքն ալ միեւնոյն համակիր ընդունեց թիւնն ըրին :

Սոյն այցելութիւններէ յետոյ, որք տեւեցին իբր մէկ ժամ, Ս. Պատրիարքն եւ ուղեկիցք հանդիսիւ ճանբայ ելան եւ ուղղուեցան դէպի Ձէմպէրլի-Թաշի հրապարակն որ լեցուած էր բազմութեամբ : Սուլթան Մահմուտի դամբարանին առջեւ Ս. Պատրիարքը Թէշրիֆաթի պէյին հետ վար իջնելով կառքէն, դամբարան մտաւ եւ ըստ սովորութեան աղօթեց երջանկայիշատակ Սուլթան Մահմուտ Բ. կայսեր դերեզմանին վրայ . ապա կառք նստելով վերստին, Քատըրկայի ճանքով ուղղուեցան ի Պատրիարքարան :

Երկու սեռէ Հայոց եւ օտարազգեա

բազմութիւն մը պատած էր Թափօրին անցած բոլոր փողոցները, տանց եւ խանութներու դուռներն եւ պատուհանները . Կէտիկ - Փաշայի Մեսրոպեան եւ Գում-Պաշուի Դրսի Պէշեմեան երկսեռ վարժարանաց աշակերտք եւ աշակերտուհիք երդերով եւ ուղերձներով ողջունեցին Ս. Պատրիարք Հօր անցքը : Յունաց Այա Քէքեֆէ եւ Էլէլէի եկեղեցեաց դուռները զարդարուած էին դափնեօք . յոյն վարդապետք, քահանայք եւ դպիրք զգեստաւորեալ, եւ խաչ ու Աւետարան ի ձեռին, կ'սպասէին . երկու եկեղեցեաց առջեւ ալ կանդ առաւ Թափօրն, յունարէն ուղերձներ արտասանուեցան եւ քահանայք ուղերձներ կարդացին . Ս. Պատրիարք Հայրը Թուրքերէն լեզուաւ քանի մը պատշաճ խօսքերով պատասխանեց յոյն քահանայից եւ իւր օրհնութիւնները ձօնեց :

Մուրա-Թաշիի փողոցին բերանը կ'սպասէին Մայր եկեղեցւոյ քահանայք եւ դպիրք եւ մայրաքաղաքիս եկեղեցեաց քարոզիչք եւ աւեգերիցունք որք երգերով առաջնորդեցին զԹափօրն ի Մայր եկեղեցի . Հայոց եւ Յունաց բոլոր եկեղեցեաց զանգակները կը հնչէին այս պահուս եւ ժողովուրդը գունդագունդ կը գլիմէր ի Մայր եկեղեցի : Եկեղեցական դասն հրաշափառով առաջնորդեց զՍ. Պատրիարքն Ս. Խաչի տաճարն որ փառաւորապէս լուսազարդեալ էր : Ն. Սրբազնութիւն շրջապատեալ յեպիսկոպոսաց եւ վարդապետաց սեղանին վրայ աղօթելէ յետոյ դարձաւ ժողովրդեան եւ նախ հայերէն, ապա Թուրքերէն լեզուներով ընտիր քարոզ մը խօսեցաւ : Համառօտիւ յայտնեց Վեհ. Սուլթանին ներկայանալն եւ գտած համակրական ընդունելութիւնը, հաղորդեց Ն. Կ. Վեհափառութեան բարեւներն առ Հայ ազգն, ցաւակցութիւնն Ներսէս Պատրիարքի մահուան առթիւ եւ Իւր բարձր գոհունակութիւնը նորա յաջորդին արժանաւոր ընտրութեան համար : Ս. Պատրիարք Հայրն ջերմ բարեմաղթութիւններ ըրաւ վասն կենաց Օգոստ. Վեհապետին Թուրքիոյ եւ նախարարացն, բարեմաղթութիւններ Հայ ազգին եւ Երեսօրն խանութեան համար զոր յատուկ օրհնութեամբ յիշատակեց, օրհնեց եւ գովեց ազգին բոլոր աշխատաւորներն եւ Պահպանելով

աւարտեց իւր խօսք : Եկեղեցական դասն և ժողովուրդը սրտաբուլիս «ձեռներով ձայնակցեցան բոլոր բարեմաղթութեանց :

Ապա Ս. Պատրիարք Հայրն վար իջնելով սեղանէն, թափորով դնաց տաճարի աջակողմեան դաւիթն Ներսէս Պատրիարքի գերեզմանին վրայ ուր աղօթեց եւ հանգիստ մաղթեց վասն հոգւոյ իւր երջանկայիշատակ Նախորդին, եւ անտի ելաւ ի Պատրիարքարան մեծաւ հանդիսիւ և բազմեցաւ Պատրիարքարանի մեծ դահլճին մէջ ուր ընդունեց Կրօնական եւ Քաղաքական ժողովոյ անդամոց, Ազգ. Երեսօրիականաց, քարոզչաց, աւագերիցունց, քահանայից եւ ազգային երեսեւեաց շնորհաւորութիւններն : Թէչրիֆաթճի պէյն եւս ներկայ էր այս ընդունելութեանց որք տեսեցին մինչեւ իրիկուն : Ժամ 10½ ին մեկնեցան բոլոր հրաւիրեալք, եկեղեցականք եւ աշխարհականք եւ Ս. Պատրիարք Հայրն երուսաղէմատուն քաղաքացաւ հանգչելու :

Երկուշաբթի առուր հանդիսին մէջ Գումգաբուէն ի Պէշիկթաշ, թափորին անցած ճանքաներուն վրայ, ժողովրդեան ըրած համակրական ցոյցերն աննկարագրելի են . ո՛չ միայն Հայք, այլ եւ Յոյնք բուն ղեկնորով եւ ծափարութեամբք կ'ողջունէին հայոց Պատրիարքն : Պալատէն վերադարձին բազմութիւնն առաւել եւս ստուարացած էր եւ մինչեւ ի Պատրիարքարան հետեւեցաւ թափորին : Թէ՛ Ս. Պատրիարք Հայրն եւ թէ՛ իւր եկեղեցական եւ աշխարհական ուղեկիցք կը կրէին իրենց պատուանշաններ . Ս. Պատրիարքն հագած էր մանուշակագոյն ձոխ վերարկու մը զոր առաջին անգամ հագած է յառուր օծման հոգեւոյն Գէորգ Գ. Կաթողիկոսի ի Ս. Եջմիածին, եւ կը կրէր վեղար, ինչպէս եւ բոլոր եպիսկոպոսունք եւ վարդապետք : Ասայակիր վարդապետ մը՝ Տ. Մամբրէ Բղնունի, կ'ընթանար թափորին առջեւէն :

Կարգադիր Յանձնախումբն առաւօտէն մինչեւ իրիկուն մեծ գործունէութեամբ հսկեց հանդիսին կարգադրութեան :

ՆՈՐԱՎԷՊ

ԿԻՆՆ ԸՍՏ ԱՍՏՈՒԾՈՅ

Ս. Պօղոսի մատուռը ժամ մէկ կը հնչէր . նոյն ժամը կը ծանուցանէին նաեւ «ձեռներն»¹⁾ որք Լոնտոնի փողոցներուն մէջ կ'երթեւեկէին : Այս ազգարարութեան վրայ որ տրամադին կը կրկնուէր — զի «ձեռներու ձայնէն աւելի մահատիպ բան չկայ — մանկամարդ կին մ'որ առաւել բան պարկեշտօրէն կահաւորեալ խցիկի մը մէջ նստած էր, թողուց ձեռագործը որ կ'երեւէր թէ շատ կ'զբաղեցնէր զինք, և տօգոյն այտերէն հոսող երկու կաթիլ արցունք սրբեց :

«Երեկուքնէ աւելի ուշ» մրուաց յուշիկ :

Այլ որպէս թէ այդ տրտունջն ինքնիրեն մեղադրելով, ասեղնակարը ձեռք առաւ նոր իմն ժրութեամբ՝ եւ ա'լ ձեռքէ չթողուց բայց միայն օրրանի մը մօտենալու համար ուր երկամեայ մանկիկ մը կը ննջէր, և կամ մօտիկ ընելու համար թէ ձայն մը չը պիտի ծանուցանէր իւր ամուսնոյն դալուստը : Բայց զիւրն անցաւ, սենեկին արեւուն ճառագայթօք լուսաւորուեցաւ եւ յայնժամ, իւր դժնդակ մտահոգութեան հակառակ, մանկամարդ կինն ուժասպառ ընկճեցաւ ի բուն եւ յողնած գլուխը մնաց անշարժ մանկանն օրորոցին վրայ :

Նիրհէ՛, հէզդ ժէննի, նիրհէ՛, ընդունէ այդ կարճատեւ հանգիստն քո հրեշտակային եւ համբերատար վշտակութեանդ, վերստացիր ոյժդ որուն պէտք պիտի ունենաս :

Գուռն ուժգնապէս զարնուելով սարսուռեցոյց եւ ընդոստ զարթոյց ժէննին, առանց սակայն յուսադրելու, զի գիտէր որ այնպէս չէր զարներ ժօրժ Մաքէնթօլ, իւր ամուսինն, իւր սիրուն մանկան հայրն, որ այնչափ կը վախնար փոքրիկն ահաբեկելէ : Բայց թերեւս իրմէ լուր մը, յապաղման մասին բացատրութիւն մ'էր, զի, թէեւ երկու ամսէ ի վեր ամեն երեկոյ ուշ կը դառնար, բայց վերջապէս կուգար եւ երդում ըրած էր բնաւ չը թերանալ :

1) Գեշերապահ :

Ժէննի դուռը վաղեց, շտապով ու երկիւղով առաւ նամակ մը, զոր գործակա-
տար մ'իրեն յանձնեց վարձքը պահանջելով:

«Նիւէյթթէն¹⁾...» գոչեց խեղճ կինն
աթոռի մը վրայ իյնալով. «Ժօրժա, ամու-
սինս ի Նիւէյթթէն», և իւր աչերը մթագնե-
ցան արտասուօք եւ քանի մը վայրկեան չը
կըցաւ կարդալ. սակայն զաւկին օրորոցին
վրայ ակնարկ մը ձգելով՝ վերսկսաւ նա-
մակն:

«Շատ կը փափաքէի, սիրելիդ իմ Ժէն-
նի, խնայել զքեզ ահուելի ցաւէ մը զոր պի-
տի կրես արդ, մանաւանդ այս անգութ-
գիշերուընէ վերջ: Բայց որո՞ւ կրնամ դիմել
բաց ի բէն, որ լաւագոյն եւ ճշմարիտ բա-
րեկամն ես: Նրէկ բռնուեցայ, տնէն ելած
պահուս, երկու հարիւր կինէ գումարի մը
համար:

Նամակը տիկին Մաքէնթօլի ոտից մօտ
ինկաւ, եւ արտասուաթոր դէմքը ծածկեց
ձեռքերովն:

«Պատասխանին կ'սպասեմ, ըսաւ գոր-
ծակատարը բիրտ ձայնով մը, մանաւանդ
ստակիս»:

Ժէննի փութաց վերսկսիլ նամակն:

«Յետոյ կը բացատրեմ քեզ այս պար-
տուց բնութիւնն ու պատճառն, իսկ այս
պահուս կարեւորն է զիս փրկել աստի: Քա-
ջասրտութիւնդ ծանօթ է ինձ, Ժէննի, եւ
ամօթխած վարքիդ հետ գիտեմ որ ունիս
նաեւ հաստատամտութիւն, եւ աւելին պի-
տի գտնես մանաւանդ օգնելու համար Ժօր-
ժիդ, մանկանդ հօր: Պէտք է երթաս քաղ-
քին մէջ գտնես Պընսոն մօրեղբայրս. գի-
տեմ որ խտաբարոյ մէկն է, որ երբեմն
անգթօրէն վարուած է հետս. պէտք չու-
նիմ քեզ ըսելու թէ ինձ համար բան մ'ը-
նել չուզեց, վասն զի առանց հարստութեան
կին մ'առած եմ:

Սակայն երբ աւելի փոքր էի զիս կը սի-
րէր, եւ ինձ կը թուէր թէ յաճախ աւելի
անգգայութիւն ցոյց կուտար, քան թէ էր
իրօք: Բաց աստի իւր շատ սիրած քրոջ որ-
դին եմ: Վերջապէս յայն եւ եթ կը յու-
սամ, մի միակ ապաւէնս նա է: Առօք մը
նստէ, քաղաք դիմէ, հոն դիւրաւ կը գըտ-
նէս Պ. Պընսոնի վաճառատունն արուրի եւ

ստիկերուագի. հետդ տար զաւանիս, իւր
տեսքը ի գութ կը շարժէ մօրեղբայրս: Վեր-
ջապէս՝ սիրելի բարեկամուհիս, խորհէ թէ
յոյսս միայն «յո միջոցին վրայ է: Ձեռք մը
ձերմկեղէն եւ զրամ զրկէ ինձ»:

«Դրամ, խոկաց Ժէննի շուրջը նայելով,
Աստուած իմ, չունիմ». Բայց յանկարծ իւր
տոգոյն ճակատը վայլեցաւ, յիշեց թէ իւր
աշխատութեան գինէն երկու կինէ խնայու-
թեամբ պահած էր, սակայն տան վարձուց
պիտի վճարէր եւ նոյն օրն ալ պայմանա-
ժամը կը լրանար: Յայնժամ, աճապարանօք
ձերմակեղինաց ծրար մը կապեց և այդ գու-
մարիկն ալ մէջը խոթեց առանց իրեն հա-
մար բան մը պահելու. իւր քսակին տակը
երկու շիլին ալ գտաւ եւ գործակատարին
տուաւ եւ խորհելով թէ վայրկեան մը կոր-
ուցնելու չէր, սա երկու տողը միայն զը-
րեց:

«Պիտի հնազանդիմ զաւանիս առողջ է»:

Իրեն նկատմամբ գանգատ մը, խորհըր-
դածութիւն մ'իսկ չըրաւ. պէտք հնազանդիմը
առնէ ինչ կ'ըսէր:

Բայց երբ մինակուկ մնաց՝ Ժէննի լա-
ցաւ. սիրովուելու պէտք ունէր. իր խոս-
տացած հնազանդութեան համար, մեծ
ջանք մ'էր ընելիքը: Մանկամարդուհին բաջ
գլխէր թէ պարոն Պընսոն իւր ամուսնու-
թեան հաւանութիւն չէր տուած եւ թէ
այն ատենէն ի վեր իր քեռորդին տեսնել
իսկ չէր ուզած: Եւ նոյն այդ խստասիրտ
մարդո՞ւն պիտի դիմէր այնքան կարեւոր
ծառայութիւն մը խնդրելու համար: Ո՞ր-
չափ բրտութեան եւ արհամարհանաց պիտի
հանդիպէր: Բայց իր Ժօրժին ձեռքն ըն-
դունած, իր բաղդն անոր բաղդին միա-
ցուցած ատեն անամպ երջանկութիւն մը
չէր երազած: Բարի հօրաքոյր մ'որ զայն
մեծցուցեր եւ քիչ ժամանակ առաջ մեռեր
էր, անոր սովրեցուց թէ կնոջ պարտքն էր
արի, բարի լինիլ եւ անտրտունջ հնազան-
դիլ. թէ գանգատն ու տրտունջ արդիւ-
եալ էին անոր եւ թէ վերջապէս իր սեռին
համար բաւ չէ միայն ըսել «կը սիրեմ
զքեզ», հապա պէտք էր կատարեալ անձ-
նութեամբ եւ բացարձակ անձնուրա-
ցութեամբ ապացուցանել զայդ: Արդ՝ թէ-
պէտ առ ահի կը դողար խորհելով իր բըռ-
նելիք ընթացքին վրայ, սակայն զգաց թէ

1) Կեդրոնական բանտ ի Լոնտոն:

վայրկեան մ'իսկ կորսնցնելու չէր, եւ մանկան նախաճաշը կերցնելէ եւ շտապով հաղուեցնելէ զինի իւր նեղկիկ եւ դժուարանցիկ սանդղէն վար իջաւ . ցրտագին ու աղէտալի մատախուղ մը կը տրէր, մին այն մատախուղներէ որք Լոնտոնի փողոցներուն վրայ մուտք ու սառոյց կը սկսեն, եւ ժէննի մինչեւ քաղաք երթալու համար մէկ մը զոնէն աւելի ճանբայ պիտի քաշէր : Բայց չվատեցաւ, առանց վարանման ճանբայ ելաւ : Իսկոյն մէզն նուրբ ու խիտ անձրեւի մը փոխուեցաւ, եւ մանկիկն՝ թէեւ խնամով փաթթուած՝ սկսաւ լալ . մայրն իր գուրգուրանք՝ մայրական փափուկ ու ամենազօր գգուանք՝ հարգարտեցոյց զայն որ ննջեց, մեղմիկ օրօրուելով մօրկանը քայլերէն : Բայց նա՛, մէն մի քայլին կը դայթէր եւ ի վերջոյ ստիպուեցաւ կենալ :

« Աստուած իմ, կ'ըսէր, Տէր իմ Աստուած, ոյժ տուր ինձ, Ժօրժ բանտն է » : Եւ իբր թէ այս խօսքերը բաւ էին իւր յոգնութիւնը վանելու, նորէն քալել սկսաւ եւ վերջապէս հասաւ : Ահա այն ատեն մանաւանդ զգաց իւր յանձն առած գործին դժուարութիւնը : Չվարանցաւ սակայն եւ, գողգոթուն ու երկչոտ, մտաւ Պընսոնի վաճառատունն արուրի եւ ոսկեղրուագի : Շատ մ'երիտասարդք զբաղեալ դէմքով կ'երթեւեկէին, այլք կը գրէին, եւ բարձրահասակ, նիհար, բաւական խստադէմ մարդ մ'ալ այլ եւ այլ հրամաններ ընելով հանդերձ, նամակ մը տուն կուտար : Տիկին Մաքէնթօլի ցած ծայնը լսելով՝ դարձաւ . տիկինը մտնաւոր ունկնդրութիւն մը կը խնդրէր :

— Առեւտրական գործի մը համար չէ՞, ըսաւ քիչ մը խստութեամբ :

— Ո՛չ, տէր իմ, պատասխանեց կինը մեղմածայն :

— Նստեւէս եկէք ուրեմն, եւ սենեակ մը մտցուց ուր լաւ կրակ մը կը վառէր . եւ մանկամարդուհւոյն առջեւ յոտին կենալով ըսաւ որ զինքն երկար ատեն չ'սպասեցնէ :

Հէգ ժէննի աւելի եւս՝ վճատիլ կ'ըսէր, եւ ոտքի վրայ չը կրնալով կենալ, աթոռի մը վրայ ինկաւ եւ արտասուեց յորդադին :

— Հասկցայ, ըսաւ վաճառականն քիչ մը աւելի քաղցրութեամբ, նպաստի կարօտ էք, առէք ահա կինէ մը : Չճանչած անձերուս

ասկէ աւելին չեմ տար . վտառնեալ կ'երեւիք, գնացէք խնամել անձերնիդ : Եւ դէպի դուռը գիւմեց :

Ժէննի մեղմով ետ մղեց դրամն, եւ ըսկըսաւ աւելի դառնադինս արտասուել :

— Ի՞նչ է ուրեմն ուղածնիդ, գոչեց անհամբեր, ժամանակ չունիմ, շուտով յայտնեցէք :

— Ներեցէ՛ք, թոթովեց կինն, ինձ համար չ'է՛ այլ ամուսնոյս, Ժօրժ Մաքէնթօլի, ձեր քեռորդուոյն համար կ'աղաչեմ :

— Ձեր ամուսինն . . . քեռորդին . . . պէտք է գիտնայ թէ ալ իր վրայ խորհիլ չ'եմ ուզեր, գոչեց Պ. Պընսոն բարձրաձայն . սպերախտ մ'է նա որ իւր անհնազանդութեանը համար պիտի տուժէ, եւ տարօրինակ բան, տիկին, դ՞ուք էք որ անոր դատը պաշտպանել կուգար :

— Աւա՛ղ, պարոն, քանի որ ես եմ իւր յանցանաց պատճառ, պէտք է գոնէ իրեն պատճառած չարիքս դարմանել ջանամ :

— Այդ ինձ չը պատկանիր, պատասխանեց Պ. Պընսոն, ամուսինդ ինչ կ'ուզէ ըլլայ, իմ ուղածս է անոր խօսքն անգամ չը սեղ— : Այս ըսելով, գնաց դէպ ի դուռը եւ ձեռքը պարզունակին վրայ դրաւ, բանալու համար :

— Աստուած իմ, գոչեց ժէննի, զայն կեցնելու համար ծնրադրելով, գիտէ՞ք թէ Ժօրժ Նիւկէյթ է եւ զանի ազատելու համար բէննի մ'անգամ չունիմ . . . ո՛հ, գթութիւն, տէր իմ, գթութիւն յանուն իւր մօրն որ ձեր քոյրն էր, գթացէ՛ք Ժօրժին զոր երբեմն կը սիրէիք :

Պ. Պընսոն կեցաւ : Ժէննիի գլխարկն գետինն էր ինկեր, իւր խարտեալ մազերը քակուեր էին եւ ձկուն ու ալեծածան խոպուկքը կը շրջապատէին դէմքն տժգոյն ու սիրուն : Պ. Պընսոն ալ անկարող էր բիրախօսք մ' ուղղել հէգ մարկամարդուհւոյն, բայց որպէս զի ի գութ չլարժի, նորէն դուռը բացաւ երթալու համար :

Ժէննի մանկիկն, որ նոր ոտք ելած էր եւ զոր մայրն կրակին մօտ նստեցուցած էր, տեսնելով զմայրն ի ծուներ եւ յարտասուել, սկսաւ լալ եւ մօրը քով գնալ կ'ուզէր, բայց իւր ոտկունքը՝ փայլուն տախտակամածի մը վրայ քալելու անվարժ ըլլալով՝ սահեցան . գետինն ինկաւ, ճակատը վառարանին պը—

ղընձապատ անկեան դարնուեցաւ եւ իսկոյն արեամբ ողողեցաւ :

— Չաւա՛կս, գոչեց ժէննի եւ փութաց անոր մօտեցաւ :

Այս սրտադու իւր աղէխարչ աղաղակն ի դուրս շարժեց զՊ. Պընսոն. մանկիկն իւր բազկաց մէջ առաւ, եւ ուժգին հնչեցոյց զանգակն որպէս զի երթան բժիշկ կանչեն : Այս գիպուածը յանկարծակի իրարու մօտեցուց երկու անձինք որոց մերձումն այնքան անյուսարի էր : Իւր մանկան վտանգաւոր կացութիւնը տեսնելով՝ ժէննի իւր վահերոտութիւնը մոռցած էր եւ ծնրադիր Պ. Պընսոնի առջեւ, անոր հետ կը խնամէր մանկիկը . յաջս իւր այլ եւս դատաւոր մը, խտտախրտ ազդական մը չէր՝ այլ հայր մը, բարեկամ մը :

— Ահա բժիշկ մը որ կառօք կ'անցնէր վաճառատան առջեւէն եւ աղաչեցինք զինք որ ներս մտնէ, ըսաւ դեռատի գրագիր մը հետն ունենալով քաղցր ու պատկառելի դիմօք ծերունի մը :

Բժիշկն իսկոյն մօտենալով մանկան, քանի մը դեղեր բերել տուաւ վերքը կապելու համար եւ յանձնարարեց որ օդ առնել չտան, խաղաղ քնացնեն եւ ապահովեց թէ այդ գիպուածը վտանգաւոր հետեւութիւն չպիտի ունենայ :

Պ. Պընսոն հրամայեց իւր սպասուհւոյն լաւ խնամ տանիլ տիկին Մաքէնթօլի եւ իւր մանկան եւ՝ բժիշկին դառնալով՝ ոսկի մ'ընծայեց :

— Շնորհակալ եմ, պարո՛ն, պատասխանեց բժիշկն, բայց կ'ուզեմ՝ այս մանկամարդուհւոյն բարիք մ'ընել առանց ո՛ր եւ է փոխարինութեան :

— Եր ճանշնա՞ք տիկին Մաքէնթօլը :

— Իւր անունը չդիտէի, կրկնեց բժիշկը, բայց այդ մանկամարդուհւոյն հետաքրքրութիւնս զրաւած է . միշտ նստած պատուհանին առջեւ կ'աշխատի առաւօտէն մինչեւ գիշեր . տեղեկութիւն առի իւր մասին : Իմացայ թէ այդ դեղատիպ անձը պաշտօնատարի մը կամ նախորդ պաշտօնատարի մը (վասն զի իւր պաշտօնը վաճառած է) կի՞նն է : Ինչ ըսին թէ այդ սիրային ամուսնութեան հետեւանքն եղած է ամուսնոյն փոփոխամտութիւնն եւ կնոջ թշուառութիւնը . բայց հրեշտակային հնազան-

դութեամբ բնաւ չարտնջար, թէ եւ ամուսինը խաղամուլ եւ ցոխակեաց մէկն է : Իմացայ վերջապէս թէ կինը գիշերներն երկար ատեն ամուսնոյն սպասելով հանդերձ կ'աշխատի միշտ . ինք կը հոգայ ամուսնոյն ապրուստը, և զայն կը մխիթարէ երբ տուն կուգայ յոգնած ու ձեռնուռնայն : Ուրիշն ձեռք իրեն դործ տուի . ասկէ աւելին ընել չհամարձակեցայ, քանզի այդ կինը թըռուտութեան մէջ ալ իւր արժանապատուութեան յոյժ նախանձախնդիր է :

Այս խօսքերէ վերջ, բժիշկը հրաժեշտ տուաւ եւ մեկնեցաւ :

Երբ մինակ մնաց, Պ. Պընսոն արտասուակից աչօք նայեցաւ տախտակամածին վրայ եղած արեան բիծերուն : — Իմ արիւնս է այս, ըսաւ, ամենասիրելի քրոջս արիւնն է, երբեմն այնչափ սիրելի ծօրժին արիւնն է, եւ նա եւ այս հրեշտակային եւ քան զմեզ հարկապատիկ բարի էակին արիւնն է : Բայց կ'ուզեմ փորձով տեսնել թէ իրօք աղնուագոյն է քան զհրեշտակ, քան զկին :

Եւ հի ամայեց որ խնդրեն տիկին Մաքէնթօլէն իր քով գալ եթէ կրնար տղէն բաժնուիլ :

Մանկիկն ի քուն էր եւ մայրը փութաց հնազանդիլ :

— Ձեր ըսածներուն վրայ խորհեցայ, ըսաւ Պ. Պընսոն առանց երեսը նայելու, եւ կը տեսնեմ որ դորովագութ սէր մ'ունիք ձեր ամուսնոյն վրայ :

Ժէննի աչքն երկինք վերցնելով ձեռքը սրտին վրայ դրաւ : Պ. Պընսոն շարունակեց .

— Կինը պէտք է սիրէ համբերութեամբ եւ անձնուիրութեամբ . պէտք է իւր սիրած անձին համար վշտակիլ . արդ՝ տեսնենք թէ պիտի յօժարի՞ս հոլատակիլ : Տիկին, ձեր ամուսնութեան երբեք չեմ հաւանիր . ծօրժը կը զրկեմ ժառանգութենէ եւ կը թողում որ բանտին մէջ մեռնի եթէ չհաճիք ձեզ ընելիք առաջարկութեան :

Ժէննի վառարանի շրջանակին կրթնեցաւ, եւ Պ. Պընսոն ալ ոտքի վրայ կեցած շարունակեց խօսքն առանց անոր վիշտը նըմարել երեւելու .

— Ֆրանսա պիտի մեկնիք, հոն գիշերօթեայ դպրոցի մը կամ մասնաւոր տան մը մէջ դաստիարակուհւոյ պաշտօն մը պիտի գըտնել տամ ձեզ համար : Ծօրժը բանտէն հա-

նեղով նոր պաշտօն մը պիտի առնել տամ : Պսակալոյժ պիտի լինիք եւ բնաւ ղինքը չպիտի տեսնէք :

— Իսկ զաւակս , դոչեց ժէննի անձկութեամբ , փոքրիկ ձէմս , քանդի ձեր անուանը կը կրէ , պարզն :

— Կ'որդեգրեմ , յարեց Պ. Պընսոն , փայլուն դաստիարակութիւն մը պիտի ստանայ եւ օր մը շատ հարուստ պիտի ըլլայ :

Ժէննիի արցունքը յորդառատ կը հոսէին , բայց պատասխան չէր տար :

— Որոշեցէ՛ք , ըսաւ Պ. Պընսոն , անպայման բանտարկութիւն եւ թշուառութիւն թորժին՝ ընդ՝ ձեզ , կամ հարստութիւն եւ առատութիւն անոր համար եթէ հաւանիք բաժանումն :

— Պատրաստ եմ մեկնելու , ըսաւ ժէննի անձկութեամբ , բայց անմիջապէս . ա՛լ չտեսնեմ ո՛չ թորժս , ո՛չ զաւակս , զի գուցէ չկրնամ ժուժել

— Թերեւս ալ չէք սիրեր թորժը , ընդ՝ միջեց Պ. Պընսոն , իւր վարքը , իւր անվայել ընթացքը . . . :

— Զինքը չսիրեմ , կրկնեց ժէննի ցաւագին ակնարկ մը նետելով յերկինս . ո՛հ , պարոն , ուրիշ աւելի մեծ զոհողութիւն մը կրնամ ընել զայդ ապացուցանելու համար :

— Սակայն իրմէ դանդատելու տեղի ունիք :

Ժէննիի դէմքը փայլեցաւ , եւ վեհանձնաբար ըսաւ .

— Թորժ կը սիրէ եւ միշտ սիրած է զիս , պարոն , կը խնդրեմ Ստուոլմէ իրեն հետ անցնել կեանքս :

— Նոյն իսկ թշուառութեան մէջ :

— Այո՛ , եթէ միայն ես կրէի զայն թըշուառութիւն :

— Ուրեմն կ'ընդունի՞ք առաջարկութիւնըս , ըսաւ Պ. Պընսոն , աչերն յայնկոյս դարձընելով :

— Կ'ընդունիմ , ըսաւ ժէննի , այլ հաճեցէք լսել : Զաւակը կը զրկէք մօրմէն , անձնուէր եւ հնազանդ կին մ'իւր ամուսնէն , ո՛հ , դէժ խոտացէ՛ք , պարոն , թէ պիտի սիրէք զանոնք , թէ չպիտի խորհիք որ հարըստութիւնը միայն փոխարինէ այս ամենը , թէ բարի եւ գորովագութ պիտի լինիք անոնց մասին :

— Կը խոտանամ , ըսաւ Պ. Պընսոն , եւ

հրաման տուաւ որ կառք մը պատրաստեն :

— Տուներնիդ պիտի երթաք , ըսաւ ժէննիին , վաղը , արշալուսոյն պիտի դան ձեզ տանիլ , մեկնելու պատրաստ եղէք :

Ժէննի պատրաստ էր հնազանդիլ , բայց դառնալով առ Պ. Պընսոն , ձեռքը միացուց :

— Ի՞նչ կ'ուզէք , ըսաւ նա :

— Զաւակս մաղերէն փունջ մը , այն խարտեաչ ու նրբաթել մաղերէն զորս այնքան համբուրած եմ :

— Ա՛ա՛ , կ'ունենաք , ըսաւ Պ. Պընսոն , որոյ ձայնը հակառակ իւր ճգանց կը տկարանար , եւ նշան ըրաւ որ դուրս ելնէ :

Իւր խցիկն հասնելով , ուր այնչափ վիշտ կրած էր , ուր որդւոյն որբանը պարապ դըտաւ , ժէննի յուսահատութեան մատնուեցաւ : Գիշերն ողջոյն լացաւ , բայց երբ առաւօտ եղաւ , ջանաց քաջ լինիլ : Գուռը զարնուեցաւ . կը յուսար թէ պիտի մեռնէր , եւ երջանիկ գանձն կ'զգար , զի գոնէ հայրենեաց մէջ եւ թորժի կ'ին մնալով կը մեռնէր :

Անծանօթ մը կառքին մէջ նստեցուց եւ տարաւ ղինքը պղտիկ տուն մ'ի Ռիչմոնտ :

— Պ. Պընսոն , ըսաւ յայնժամ անծանօթին , Պ. Թորժ Մաքէնթօլի պարտուց բնութիւնն իմացած է . այդ պարտքը դերասանուհւոյ մը համար եղեր է . իր մօրեղբայրն այնչափ բարկացած է որ անոր տեղ ձեզ պահել կ'ուզէ իւր տունը . Պ. Մաքէնթօլ օտար երկիր մը պիտի երթայ , դուք ալ ազատ ու հարուստ պիտի լինիք :

— Հարո՛ւստ առանց իրեն , ըսաւ կինը , ո՛հ , ո՛չ . . . Ասկէ զատ վստահ եմ թէ Թորժ յանցաւոր չէ :

— Տեսէ՛ք սա նամակը :

— Գոյութիւն չունի այն , դոչեց ժէննի , առանց կարդալու նամակը պատուելով , եւ քանի որ ես չեմ ամբաստանել ղինքը , ո՞վ իրաւունք ունի ամբաստանելու :

Ժէննի վայրկեան մ'առանձին թողուեցաւ , յայնժամ լացաւ ու աղօթեց : Վերջապէս դուռը բացուեցաւ . Պ. Պընսոն ժէննիի մօտնկիւր բաղկաց մէջ եւ Թորժ իւր ետեւէն ներս մտաւ :

— Զեղի համար ներեցի իրեն , զի դուք էք կ'ինն ընդ Ստուոլմոյ :

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՏԱՐԱԳՐԵԱԼ ԳԻՒՂԱՅԻՆ ՆՈՒԷՐԸ
ԻՒՐ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻՆ

Տեանո՞ւմ եմ թէ յիշո՞ւմ եմ
Դաշտ, սար ու ձոր դեռ խիստ աղօտ
Ստուերի տակ են ննջում,
Հեզ գեփիւռից տերեւ ու խոտ
Թոյլ ձայնով են շըշջում,
Պարզ առուակի վրայ թափուած
Լուացվում էք դուք քնից,
Բայց առաւօտ դեռ չէ բացուած՝
Արտուալ իւր մոռ թւունից
Միայն կարդում է բարձրագոյն
Հրաւեր օրուայ թագուհոյն:

Տեանո՞ւմ եմ թէ յիշո՞ւմ եմ
Խոտաբարդ մարալ կովեր
Չմայլած ձեր դայլայլով
Հանդարտ խնդնած են դունչը վեր,
Կաթ էք քաշում խշշալով,
Փաղաքշանօք մերթ գովում էք
Կովի կեռ կեռ պօզերը,
Մերթ գիծ հորթին արգելում էք
Լիզել ձեր սուրբ մսիկերը:
Ունի՞ք միթէ ցաւ ու դարդ,
Դուք հայ գիւղի վարդ ու զարդ:

Տեանո՞ւմ եմ թէ յիշո՞ւմ եմ
Յօղեր վաղուց են սպառել
Երկրից տակաւ առ տակաւ,
Արեգը՝ հա գիծ է օռել:
Գլորվում է դէպ հարաւ,
Մետաքսաթել մեր արտերում
Ջերթ մեղուներ սփռուած,
Ուրախ ուրախ քաղ էք անում
Աշխատութեան մէջ վառուած,
Բորբոքվում են ձեռքում եռանդ
Եւ բնութեան սիրոյ խանդ:

Տեանո՞ւմ եմ թէ յիշո՞ւմ եմ
Երեկոյ է մաքուր յստակ
Երկինք պայծառ եւ ամբիծ
Վերջացել են գործ եւ վաստակ,
Վերագառնում էք հանգից,
Բայց չէք տեսնում ինչպէս ձեզ հեռ
Հով ժպտում է խաղում,
Գուցէ ձեռքից եւ հոտաւետ
Նա համբոյրներ է քաղում,
Ախ դուք միայն վաղում էք շուտ՝
Հասնել գիւղը մինչեւ մութ:

Մանչէսդր

ՎԱՐԱՆԴԱՏԷ

ՔԱՂՈՒԱԾ

ՇԱՐԱԹԱԿԱՆ ԼՐՈՑ

4-10 ՄԱՅԻՍ 1885

ԱՐՏԱՔԻՆ

Կը հաւաստեն թէ անգլիական արդի Երեսփոխանութեան լուծումն և երեսփոխանական ընդհանուր ընտրութիւնք տեղի պիտի ունենան հոկտ. ամսոյ մէջ:

Լոնտոնի լրագիրք միահամուռ կ'ակընկալեն մօտաւոր վերջնական լուծում մը ափշանեան խնդրոյն, և չեն կարծեր որ այս սուհետեւ ո'ւ է նոր դժուարութիւն արգելք լինի Ռուսիոյ և Անգլիոյ համաձայնութեան:

— Անգլ. զօրքերը Վերին Նեղոսէ կը սկըսին քաշուիլ առաջիկայ հինգ շաբթի: Լորտ Ուոլտի և իւր սպայակոյտ մեկնեցան Սուաքիմէ: Կրէյվս զօրավարն ստանձնեց զօրաց հրամանատարութիւնը Լորտ Ուոլտի տեղ:

— Ռուսիոյ ներքին գործոց նախարարն որոյ հիւանդութիւնն աւելի սաստկացած է, Մոսկուա գնացած է բժիշկներէն խորհուրդ հարցնելու: Դոլդոյ կոմսը դիտաւորութիւն ունի անտի Վիէննա երթալու:

— Ռուս լրագիրք կը հաղորդեն թէ որոշուած է բոլորովին վերցնել գլխահարկն եւրոպական Ռուսիայէն եւ ուրիշ հարկերու փոխանակել:

— Մայիս 12ին, Վարչակոյ մէջ, ռուսերէն Պաշտօնական Եփեսոս հրատարակած է նոր օրէնք մը, որուն համեմատ այսուհետեւ բոլորնական ամեն նախալրեարանաց մէջ ուսուցման լեզուն պիտի լինի ռուսերէն: Փանի մը տարի առաջ, ուրիշ օրէնքով մը, նախաւորութարանաց մէջ բոլորներէն պահուելով հանդերձ, միջնակարգ վարժարանաց մէջ ուսուցման լեզուն ռուսերէն եղած էր: Նոյն տնօրինութիւն այժմ կը հրամայուի նախալրութարանաց համար: Միջնակարգ բոլորնական վարժարանաց մէջ բոլորներէն խօսիլ արգիլուած է, և կը կարծուի թէ, մի քանի տարիէն, նոյն տնօրինութիւն պիտի որոշուի նաև նախալրութարանաց համար:

— Նախքան Վրէժն կը հրատարակէ խօ-

սակցութիւն մը, զոր իւր մէկ խմբագիր ունեցեր է ի Կ. Պոլիս Պ. Նէլիտովի հետ : Դեսպանն յայտարարեր է թէ Գերմանիա «Գարգանէլի չէզոքութիւնն երաշխաւորող կարգադրութեան մը» ծրագիրը կը յօրինէ սոյն միջոցիս, զոր ի մօտոյ պիտի մատուցանէ Տէրութեանց :

— Մոսկուայի վաճառականը մտադիր են Ալեքսանդր Գ. Կայսեր մատուցանել շնորհակալեաց ուղերձ մը, շնորհաւորելով զՆ. Կ. Վեհափառութիւն վասն այն հաստատուն և ազդեցիկ քաղաքականութեան որում հետեւեցաւ Անգլիոյ հետ ծագած աֆղանեան խնդրոյն մէջ : Վաճառականը յոյս կը յայտնեն թէ նոյն հաստատուն և ազդեցիկ քաղաքականութեան պիտի հետեւի կառավարութիւնն ապագային մէջ, վասն բարեկեցութեան երկրին, որ սիրայօթար պիտի ընէ ամեն զոհողութիւն կառավարութեան ոյժ տալու համար : Ռուսիոյ միւս մեծ քաղաքներէն ալ նմանօրինակ ուղերձներ պիտի զրկուին Կայսեր :

— «Ժողովրդեան Գաշնակցութիւն» կոչուած մեծ մարմինն, հրապարակային նիստ մ'ըրաւ ի Լոնտոն անցեալ չարթու մէջ, ընդ նախագահութեամբ Պ. Սքորիի, արմատական անդամին Երեսփոխանաց Ժողովոյն, խորհրդակցելու համար Լորտերու Ժողովոյն ջնջման վրայ : Ներկայ էին բաղմաթիւ արմատական Երեսփոխաններ : Որոշում մը քուէարկեցաւ, յայտարարող թէ արմատական հանրապարութեան առաջին ջանքերը պարտին ուղղուիլ ընդդէմ Ժառանգական (Լորտերու) Ժողովոյն, և թէ արմատական և ազատական ընտրելիներէն պէտք է խընդրել որ նորակազմ Խորհրդարանին մէջ սոյն սկզբան համակերպելու խօստում տան :

Ն Ե Ր Ք Ի Ն

Թէ՛ Կրէտէի եւ թէ՛ Սամոսի մէջ վարչային տաքնապ կը տիրէ : Ֆոթիատէս փաշա անհամաձայն է Կրէտէի երեսփոխանական Ժողովոյն հետ եւ Ատտիտէս փաշա Սամոսի երեսփոխանական Ժողովոյն հետ : Երկու Ժողովներն ալ իրենց կուսակալին պաշտօնանկութիւնը քուէարկելով, հեռագրած են Բ. Դրան, խնդրելով որ նոր կուսակալ մը

ընտրուի : Սամոսցիք միանգամայն պատգամաւորութիւն մը զրկած էին ի Կ. Պոլիս, որ Մեծ-Եպարքոսին ներկայելով կղզւոյն բընակչաց զանգատներն յայտնեց Ատտիտէս փաշայի դէմ : Ն. Բարձրութիւնը խոստացաւ նախարարաց Խորհրդոյն ներկայել խընդիրն : Ատտիտէս փաշա որ իւր պաշտօնի գլուխը կը գտնուի դեռ եւ Բ. Դրան որոշման կ'սպասէ, հեռագրաւ խնդրած է Վեհ. Սուլթանէն որ ի դատ կոչուի եւ պատրաստ է ինքզինքն արդարացնել իւր դէմ եղած ամբաստանութեանց մասին :

— Դատական եւ Կրօնական գործոց նախարար Հասան Ֆէհմի փաշա մայրաքաղաքս հասաւ այս երկուշաբթի օր եւ ուղղակի Կայս. Պալատը դնաց :

Ն. Վսեմութիւն իւր պաշտօնի գլուխն անցած է երկու օրէ ի վեր :

— Անգլիական արտասովոր դեսպան Սըր Ուիլեմ Զուայդ այսօր պատիւ կ'ունենայ Վեհ. Սուլթանին ներկայանալու :

— Թուրքիոյ բոլոր գաւառաց մէջ գործադրութեան գրուելու համար ոստիկանական նոր կանոնադիր մը պատրաստուած է, որ Կայս. վաւերացումն ստանալէ յետոյ, գործադրութեան պիտի դրուի :

— Վեհ. Սուլթանն ադամանդազարդ ճոխ բնջատուի մը նուիրեց ամերիկեան նախորդ պեսպան Ուայլէյս զօրավարին որ նախընթաց օրը մեկնեցաւ Կ. Պոլսէն : Նորընտիր դեսպան Պ. Քօքս աստ կ'սպասուի մայիսի վերջը :

— Առեւտրական պաշտօնատան մէջ Յանձնաժողով մը կազմուեցաւ որ պաշտօն ունի տեղեկագրով մը ցոյց տալ Թուրքիոյ մէջ երկրագործութեան ծաւալման նպաստելու յարմարագոյն միջոցներն : Այս Յանձնաժողովը նախագահն է Ամասեան էֆէնտի :

— Յունաց Ամեն. Պատրիարքն բաւական ժամանակէ հետէ մշտատեւ հիւանդ լինելով, բժշկաց Խորհրդով Հէյպէլի կղզի կերթայ ամառն եղանակն անցունելու : Ն. Սըրբազնութիւնը պիտի բնակի կղզւոյն Յունաց աստուածաբանական վարժարանի մէկ յարկին մէջ : Խոյ Պատրիարքարանի գործերը պիտի կառավարուին փոխանորդի մը ձեռամբ, ցկատարեալ ասպքինումն Յովակիմ Դի :

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Ամեն. Ս. Պատրիարք Հօր Վեհ. Սուրբանին եւ նախարարաց ներկայանալու (*) յաջորդ օրն՝ երեքշաբթի, Բարձ. Մեծ. Եպարքոսին եւ արտաքին գործոց նախարար Ասիմ փաշայի կողմէ իրենց թարգմանք ազդ. Պատրիարքարան գալով, շնորհաւորեցին Ն. Սրբազնութեան բարձր պաշտօնը։ Ներքին գործոց նախարար Բարձր. Էտէէմ փաշա եւս այցելումը զրկած էր։ Նոյնպէս շնորհաւորութեան եկան անգլիական եւ սպանիական դեսպանատանց թարգմանք, Հռոմէական Հայոց Պատրիարք Գեր. Ազարեան Սըրբազան՝ մէկ եպիսկոպոսի եւ երկու վարդապետաց ընկերակցութեամբ։ Իսկ Յունաց Պատրիարքին կողմէ՝ Ամասիոյ մէտրապոլիտը քարտուղար վարդապետի մը հետ, ինչպէս եւ վարչական ժողովոյ անդամ մը եւ Բաբու Քէհեասին։

Ամեն. Ս. Պատրիարքն արժանավայել պատուով մեծարեց այցելուներն եւ պատշաճ բանիւր պատասխանեց եղած շնորհաւորութեանց։

Բաւոր այս բարձրատիճան այցելուաց ընդունելութեան պահուն, Գեր. Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեան ներկայ գտնուեցաւ Պատրիարքարանի մեծ դահլճին մէջ։

Չորեքշաբթի օրն, առաւօտուն, Ս. Պատրիարք Հայրն դատական եւ կրօնական գործոց նախարար Վսեմ. Հասան Ֆէհմի փաշայի ապարանքն երթալով, բարի գալուստ մաղթեց։ Ապա ըստ սովորութեան այցելութիւն տուաւ Բարձր. Շէյխ-Իւլ-Իսլամ Էֆէնտիին եւ Սպարապետ Վսեմ. Ղազի Օսման փաշային եւ մեծ պատուով ընդունուեցաւ։

Յաջորդ օրն այցելեց Քաղապետ փաշայի եւ Կրթական ու Ոստիկանութեան նախարարաց ապարաններն։

— Այս չորեքշաբթի օր Խառն ժողովն գումարեցաւ ի Պատրիարքարան ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ ատենապետութեամբ Վսեմ. Մաքսուտ Սիմոն պէյի։

(*) Հանդիսի մանրամասն նկարագիրն հրատարակած ենք լրագրոյս մէկ ուրիշ մասին մէջ։

Ժողովոյ որոշմամբ, Ս. Պատրիարք Հայրն հեռագիր մ'ուղղելով ի Ս. Էջմիածին, առ Ամեն. Նախագահն Համազգային Ժողովոյ՝ Տ. Մկրտիչ Արքեպիսկոպոս Բաբամեան, Կաթողիկոսական ընտրութեան արդիւնքը շնորհաւորեց։

Ժողովը նկատելով որ բազմաթիւ խնդիրներ ժամանակէ մ'ի վեր առկա կը մնան, ի դիւրութիւն այդ խնդրոց լուծման, Յանձնախումբ մը կազմեց իւր մէջէն, պաշտօն տալով նմա իմաստասիրել խնդիրներն եւ ծանօթագրել առ Ս. Պատրիարքն, խնդրելով Ն. Սրբազնութեանն որ արժան տեսած խնդիրը գործադրէ ըստ տեղեկագրոյ Յանձնախմբին, որպէս եւ կ'արտօնէ Ազգ. Սահմանադրութիւնն այսպիսի պարագայից մէջ։

Այս կերպով, շատ մը խնդիրներ որք Խառն ժողովոյ օրակարգը կ'ըստուարացնեն, ընականաբար պիտի լուծուին եւ ժողովը ժամանակ պիտի ունենայ կենսական խնդրովք զբաղելու։

Յանձնախմբի անդամք են՝

Տ. Մատթէոս Եպիսկ. Իզմիրլեան

» Սուքիաս քհն. Ստեփանոսեան

Բարսեղ Էֆէնտի Հալաճեան

Միքայէլ » Մամիկոնեան

Այս Յանձնախումբ պիտի գումարի ամեն երկուշաբթի առաւօտները, Պատրիարքարանի մէջ։

Խառն ժողովն իւր այդ նստին մէջ երկարօրէն զբաղեցաւ գաւառական անխնամ առաջնորդութեանց ծանուցեալ խնդրովքն եւ չկրնալով որոշման մը յանգիլ, որոշեց վերստին գումարիլ յառաջիկայ չորեքշաբթի եւ զբաղիլ նախապէս Վանօրէից ընդ Առաջնորդութիւնս միացման խնդրովքն, որոյ նկատառման կարեւորութիւնն յոյժ զգալի եղած է։

ՕՍՄ. ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Ա. Զ. Դ.

ԱՌԺԱՄԱՆԱԿԵԱՅ Վ. ԿԱՅԱԳԻՐՔ

Արժէթղթոց միացման անթիւ և միացեալ նոր արժէթուղթիմը առանձաբար իրաւունք տուող յոյժ մանր ստորաբաժանմանց ներկայացման համար ի Պոլիս Օսմ. Կայսերական Պանքային կողմէ արուած ստացադրոց տէրերուն կը ծանուցուի թէ հրաւիրեալ են իրենց հաշուոց կարգադրութեան համար, մինչեւ յառաջիկայ յունիս 15 բաւական թուով ստացադիր ներկայացնել յիշեալ Հաստատութեան :

Հաւատալ պարագայի մէջ, այդ թուականէն յետոյ սովորական տուրք մը պիտի առնուի այն արժէթղթոց անուական արժէքի վրայ, որոց իրաւունք ունին :

Կ. Պոլիս, 21 մայիս 1885

ՕՍՄ. ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Օսմ. Կայս. Պանքայի Ղալաթիոյ և Պոլսոյ գրասենեակները գոյ պիտի լինին յառաջիկայ երկուշաբթի օր, 13/25 մայիս :

Ե. ԲՕԼ ՏԵ ԲՕՔ

ՊԱՐՈՆ ՇՈՒՊԼԱՆ

ՀԱՏՈՐ Ա.

Շարլ Բօլ աը Բօքի սոյն վէպն, զբօսեցուցիչ այնքան որքան հրահանդիւշ, ծիծաղաշարժ և բարոյալիր միանգամայն, մաքուր տպագրութեամբ իւրոյ ընծայուած է Աշտիան տպարանէն : Բօլ աը Բօք իւր այս գործին մէջ, իւր թեթեւ և սահուն ոճով, կը ձաղկէ Բարիզցոց յատուկ մտւածիւնները : Թարգմանիչն, ընտրելով պարզ ու ժողովրդական աշխարհաբար, հաւասարած է հեղինակին ոճոյն :

Բ. հատորը մամլոյ տակ է և քիչ ատենէն կը հրատարակուի :

Կը ծախուի բոլոր հայ գրավաճառաց քով : Կեդրոնատեղին է Աշտիան տպարան, Եւսուֆեան խան : Գին 5 դրուշ :

ԿԱՐԵԻՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ըստ բանի յաճախորդաց կերելի թէ խանութպանը ունի անվայել սովորութիւն ըրած են իրենց վաճառատունը Մինասեան Ամերիկեան վաճառատան ճիւղը կոչել յաճախորդ շահելու նպատակաւ, երբ չգիտցողներու կողմանէ իրենց հարցուի Ամերիկայի վաճառատան ուր լինելը : Վասն որոյ առ ի զգուշութիւն Ս. Մ. Մինասեան և ընկերք պատիւ կը համարին ծանուցանել արդոյ հասարակութեան թէ Ամերիկեան վաճառատունը, որ հաստատուած է 1852 ին, բարձր չէնք մի է եւ կը գտնուի ի Ղալաթիա Բէրլէմպէ Փազարի մօտ Եէնի ճամբի կողմէ միջին զոներէն միւրիս կից, եւ թէ յայլուր ի Ղալաթիա ի Բերա և կամ Պոլսոյ կողմը ճիւղ չունի :

ՄԱՁԻ ՆԵՐԿ

Լաւագոյն տեսակը կը ծախուի Ս. Մ. Մինասեան եւ ընկերաց Ամերիկեան վաճառատան մէջ ի Ղալաթիա Բէրլէմպէ բազարի մօտ Եէնի ճամբի գրան կից :

Վերոյիշեալ ներկի գործածութեան եղանակը շատ դիւրին, արդիւնքը վայրկեանակաւ ու խիստ գոհացուցիչ եւ գոյնը մշտնայուն ու բոլորովին բնական է : Գնողները կը վկայեն թէ ուրիշ ներկերու անմաքրութենէն ու ունանց իսկ գարշելի հոտէն ծանձրացած ըլլալով, սխաժ են գործածել այս ներկը որով շատ գոհ եղած ու ներդրութենէ աղատած են, ուստի ոչ մէկ ներկասոր պատուականութեանը կը հաւասարի : Ներկի կարօտութիւն ունեցողները թող հաճին փորձել : Կը ներկէ սեւ կամ չափաւ կանաչոյն, մորթը չաղտոտեր ու փնասակար նիւթ չը պարունակեր :

ԱՐԿԱԾՔ ԱՆՐՁԱԿԱՆՔ


ՄԻԻՆԻՅԱԻՌԻՉԸՆ ՊԱՐՈՆԻ

ՎԷՊ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ

Թարգմանեաց Կ. Ս. Իւլիւս-ճիւն

Լրագրոյս մէջ իբր թերթօն հրատարակեալ սոյն թարգմանութիւնն առանձին հատորով մը կաղմուած է և կը վաճառուի բոլոր գրավաճառաց քով : Ի Գին 3 Ղրուշի :

**ԼՈՅԹԸՆ ԵՒ ՉԻՍՆԵԼ
ՄԹԵՐԱՆՈՑ
ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ
ԳՈՐԾԵԱՑ**
ՔԻՒՐՔՃԻ ԳԱՔՈՒՄԸ, ՂԱՒԱԹԻՍ



«ՕՐԻԱՆ» Մականուանեալ հնձող մեքենայն երկու ձիով կը քաշուի և կը կշռէ 300 օխս :

ԳԻՆ՝ 35 ՕՍՄ. ՈՍԿԻ Է

Մեքենային կատարելագործութիւնը երաշխաւորեալ է : Գնողըն երբ գոհ չիլինի, կրնայ ետ առնուլ իւր ստակն :

ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԵԱՅ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Թարգմանիչ ԿԱՐԱՊԵՏ Ս. ԻԻԹԻՒՃԵԱՆ

Հրատարակիչք

Նշան Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ և Ս. ՏԷՎԷՆԵԱՆ

Սոյն գործին Բ. Հատորն եւս, որ կը պարունակէ 72 մեծ և փոքր պատկեր, ամբողջացած ըլլալով, սկսուած է երրորդ հատորի հրատարակութեան :

Առաջին և երկրորդ հատորներու թղթակաղմին գինն է՝ իւրաքանչիւրին 30 ՂՐԸ :

Երրորդ հատորի բաժանորդագրութեան գինն է 25 ՂՐԸ :

16 երեսէ բաղկացեալ մէն մի թերթ 30 բարս :

Գաւառաց համար թղթատարութեան ծախքը միտուել հաշուելով, մէն մի հատորի գինն է 30 ՂՐԸ :

Գաւառներէ բաժանորդ գրուիլ փափաքողք պարտին բաժնեղինը ԿԱՆԹԻԿ յղել, Օսմանեան թղթատարի նամակաղբոջով, «Բուրաստան Մանկանց» հանդիսի խմբագրատունն, հետեւեալ հասցէիւ :

Նշան Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Կ. Պոլիս, Էսկի Չապիթիէ ճառատէսի, թիւ 63

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ՈՒՍՈՒՄԵՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՑ
Ի պէտս հաւահաս աշակերտաց, ընծայացուաց և եկեղեցատիրաց :

Երկարաբերեաց

Տ. ԽՈՐԷՆ ՔԱՀԱՆԱՅ ՔԻՉԻՐԵԱՆ

(Գին կէս մէճիա)

Գ. Մ. ԱՍԼԱՆԵԱՆ

ՀԱՄԱՌՈՑ ԲՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ի ՊԵՏԱ ՍԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ

Աղգային առաջնակարգ վարժարանաց համար անհրաժեշտ եղող սոյն օգտակար դասագիրքը կը գտնուի բոլոր գրավաճառաց քով : Կեդրոնատեղին է Հայոց Միացեալ Ընկերութեանց Դրասենեակը, Կալաթա, Կէօշէ Օղլու թան, 12 :

Գին 20 դահ. արծաթ :

Շատ գնողաց համար գոհացուցիչ գեղջ կը լինի : 2—10

ԲԱՌԳԻՐՔ

ՀԱՅ—ԴԱՂՂԻԱՐԷՆ

Ի Ա. ՆԱՐ-ՊԷՅ ԼՈՒՍԻՆԵԱՆԷ

Բ. ՏԻՊ

Տպարեւ Է Փարէկ

Գրական յառաջադիմութեան սատարելու և ազգին ուսանող պատանեկութիւնը քաջալերելու բարի նպատակաւ, մեծանուն հեղինակը բարեհաճած է 25% զեղջ ընել իր վերոյիշեալ աշխատութեան գնոյն վրայ, որ իր տեսակաւն միակ և պատուականագոյն գոյն գործ մ'է Հայ մատենագրարանին մէջ :

Գին հաշիւ օրէնսէ, քիսանսէ 20Է 15 ֆրանկ

Յիշեալ գրքին վաճառման ընդհանուր գործակալութիւնն այսուհետեւ յանձնուած է առ Ե. Վրոյր և Ընկ. Թղթավաճառ Ի Կալաթա, Քօմիսիօն խանին դուրսը, թ. 23 : Չափաւոր տասանորդով կը վաճառուի մեծ բանակութեամբ գնել ուղղով գրավաճառաց : Աղգային հաստատութիւնը, նոյնպէս և վերկայեալ կարօտ սւսանողք իրաւունք ունին տրժանաւոր գեղջ մը ստանալ որոշեալ գընոյն վրայ :

Մրտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻՒՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼ Ք ԼՐԱԳՐՈՑ